տողբան զասակարգային կռիլի ամենատուր
ձևն է:

Ռոզիթ: Ահա բանն ել հենց այդ է:

Սթալին: Իսկ Բուխարինի մոտ դուրս ե
գալիս, վոր կապիտալիստները ներաճում են
պրոլետարիատի հենց այդ դիկտատուրայի
մեջ: Ել ինչպես չեք հասկանում, դուք այս
բանը, ընկեր Ռոզիտ: Ել ռւս դեմ պետք ե
պայքար մղել, ել ռւս դեմ պետք ե դասա-
կարգային կռիլի ամենասուր ձևը մղել, յեթե
քաղաքի ու գյուղի կապիտալիստները նե-
րաճում են պրոլետարիատի դիկտատուրայի
սխառմի մեջ: Պրոլետարիատի դիկտատու-
րան նրա համար ե պետք, վոր անհաշո-
պայքար մղենք կապիտալիստական տարրե-
րի դեմ, նրա համար ե պետք, վոր ճնշենք
բուրժուազիային ու կապիտալիզմն արմա-
տախիլ անենք: Բայց յեթե քաղաքի ու
գյուղի կապիտալիստները, յեթե կուլակն ու
կոնցեսիոները ներաճում են սոցիալիզմի մեջ,
սրանից հետո ընդհանրապես հարկավոր ե
արդյոք պրոլետարիատի դիկտատուրան, և

յեթե հարկավոր ե, ապա վոր դասակար-
գին ճնշելու համար:

Ռոզիթ: Բանն ել հենց այն ե, վոր նե-
րաճումը Բուխարինի մոտ դասակարգային
կռիվ ե յենթադրում:

Սթալին: Յես տեսնում եմ, վոր ընկ.
Ռոզիտը յերգիլ ե ծառայություն մատուցել
ընկ. Բուխարինին: Բայց նրա ծառայու-
թյունն արջի ծառայություն ե դուրս գալիս,
վորովհետե նա, ցանկանալով փրկել Բու-
խարինին՝ իրապես ջրահեղձ ե անում նրան
խապառ: Զուր չե ասված, վոր «ծառայակա-
մ արջը թշնամուց ավելի վտանգավոր ե» (ընդ-
հանուր քրիշ):

Յերկուսից մեկը. կամ շահերի անհաշու-
լի հակադրություն կա կապիտալիստների
դասակարգի ու իշխանության հասած և
իրենց դիկտատուրան կազմակերպած բան-
վորների դասակարգի միջև, կամ շահերի
այդ հակադրությունը չկա, և այն ժամա-
նակ մի բան ե մնում—դասակարգային շա-
հերի ներդաշնակութուն հայտարարել:

Կամ դասակարգերի կռիլի մարքսյան թեո-

րիա, կա՛մ սոցիալիզմի մեջ կապիտալիստներին ներաճեցու թեորիա: Կա՛մ դասակարգային շահերի անհաշտելի հակադրություն, կա՛մ դասակարգային շահերի ներդաշնակության թեորիա: Յերկուսից մեկը:

Դեռ կարելի չե հասկանալ Բրենտանոյի կամ Սիդնեյ Վեբբի տիպի «սոցիալիստներին», վորոնք քարոզում են սոցիալիզմի ներաճումը կապիտալիզմի մեջ ու կապիտալիզմինը՝ սոցիալիզմի մեջ, վորովհետև այդ «սոցիալիստներն» իրապես անտիսոցիալիստներ են, բուրժուական լիբերալներ: Բայց չի կարելի հասկանալ այն մարդուն, վորը ցանկանում է մարքսիստ լինել ու դրա հետ մեկտեղ սոցիալիզմի մեջ կապիտալիստներին ներաճելու թեորիա չե քարոզում:

Ընկ. Բուխարինն իր ճառում վորձ արեց սոցիալիզմի մեջ կուլակների ներաճելու թեորիան ամրապնդել՝ վկայակոչելով Լենինի հայտնի ցիտատը: Ընդամին նա պնդում է, թե Լենինը հենց նույնն է ասում, ինչ վոր Բուխարինը: Դա ճիշտ չէ, ընկերներ: Դա կոպիտ ու անթույլատրելի զրպարտություն

է Լենինի նկատմամբ: Ահա Լենինից առնված այդ ցիտատի տեքստը.

«Իհարկե, մեր խորհրդային հանրապետության մեջ սոցիալական հասարակարգը հիմնված է յերկու դասակարգի՝ բանվորների ու գյուղացիների գործակցության վրա, վորին այժմ վորոշ պայմաններով թույլ է տրված մասնակցելու նաև Հնարմաններին», այսինքն՝ բուրժուազիային»¹:

Դուք տեսնում եք, վոր այստեղ վորձ մի խոսք չկա սոցիալիզմի մեջ կապիտալիստների ներաճելու մասին: Այստեղ խոսվում է միայն այն մասին, վոր մենք «թույլատրել ենք», վոր բանվորներին ու գյուղացիներին «վորոշ պայմաններով» գործակցեն նաև նարմանները, այսինքն բուրժուազիան: Ի՞նչ է նշանակում սա: Նշանակում է սա արդյոք, վոր մենք հենց դրանով թույլատրել ենք սոցիալիզմի մեջ նարմանների ներաճելու հնարավորությունը: Իհարկե, չի նշանակում: Լենինից բերված ցիտատն այս-

¹ Լենին, Մենք ինչպես վերակազմակերպենք Բան-գյուղտնտեսությունը: Յերկեր, հ. XXVII, էջ 405:

սկես կարող են մեկնաբանել միայն ամօթը
կորցրած մարդիկ: Սա լուկ այն է նշանա-
կում, վոր մենք բուրժուազիային այժմ
չենք ժողնչացնում, վոր մենք նրան այժմ
կոնֆիսիկացիայի չենք յենթարկում, այլ
թույլատրում ենք նրա գոյութիւնը վորոշ
սոցիալականերով, այսինքն՝ պրոլետարիատի
դիկտատուրայի որենքներին անսոցիալա-
նէն յենթարկելու դեպքում, այսինքն՝ կա-
պիտալիստներին հարաձուռ կերպով սահմա-
նափակելու դեպքում, սահմանափակում, վո-
րի նպատակն է նրանց աստիճանաբար ար-
տամղել ժողովրդատնտեսական կյանքից:
Կարելի՞ յէ արդոք կենսագործել կապիտա-
լիստների արտամղումը և կապիտալիզմի ար-
մատների ժողնչացումը՝ առանց կատարել
դասակարգային կռիւ: Վճի, չի կարելի: Կա-
րելի՞ յէ արդոք ժողնչացնել դասակարգերը
սոցիալիզմի մեջ կապիտալիստների ներա-
ճելու պրակտիկայի ու թեորիայի առկայու-
թյամբ: Վճի, չի կարելի: Այդպիսի թեորիան
ու պրակտիկան կարող են միայն արմատա-
վորել ու հաճերժացնել դասակարգերը, վո-

րովհետեւ նա, այդ թեորիան, հակասում է
դասակարգային կռիւի թեորիային: Ե՛, իսկ
Լենինից բերված ցիտատն ամբողջապես ու
լիովին խաբսիւմում է պրոլետարիատի դիկ-
տատուրայի սոցիալականերում մղվող դասա-
կարգային կռիւի մարքսիստական թեորիա-
յի վրա: Ի՞նչ ընդհանուր բան կարող է լի-
նել սոցիալիզմի մեջ կուլակի ներաճելու վե-
րաբերյալ Բուխարինի թեորիայի ու Լենի-
նի թեորիայի միջև դիկտատուրայի՝ վորպես
դասակարգային կատարել կռիւ՝ մասին:
Պարզ է, վոր այստեղ ընդհանուր ժողնչ
չկա և չի կարող լինել: Ընդ. Բուխարինը
կարծում է, վոր պրոլետարիատի դիկտա-
տուրայի որով դասակարգային կռիւն պետք
է մաքի ու լիկվիդացիայի յեմքադի նրա
համար, վոր դասակարգերի ժողնչացում
ստացվի: Իսկ Լենինը, ընդհանրապէս, ու-
նեցանում է, վոր դասակարգերը կարող են
ժողնչացվել միայն համառ դասակարգային
կռիւի միջոցով, վորը պրոլետարիատի դիկ-
տատուրայի սոցիալականերում ի՛նչ ակնի կա-

ճաղի յի դառնում, քան մինչև պրոլետարիատի գիկտատուրան:

Հիասակարգերի վոչնչացումը, — ասում է Լենինը, — յերկարատև, դժվարին, համառ դասակարգային կռիվ գործ է, կռիվ, վորը կապիտալի իշխանության տապալումից նետ, բուրժուական պետության կործանումից նետ, պրոլետարիատի գիկտատուրայի հաստատումից նետ չի չբացում (ինչպես հին սոցիալիզմի է հին սոցիալ-դեմոկրատիայի գոհհիկներն են յերևակայում), այլ միայն իր ձեռն է փոխում, շատ կողմերով եւ ալիքի կատաղի դառնալով¹:

Ահա թե ինչ է ասում Լենինը դասակարգերի վոչնչացման մասին:

Դասակարգերի վոչնչացում պրոլետարիատի կառավարչական կռիվի միջոցով, — այս է Լենինի ֆորմուլան:

Դասակարգերի վոչնչացում դասակարգային կռիվ մարելու ու սոցիալիզմի մեջ կապիտալիստների ներանելու միջոցով, — այս է ընկ. Բուխարինի ֆորմուլան:

Ի՞նչ ընդհանուր բան կարող է լինել

¹ Լենին, Վոլջույն հունգարական բանվորներին: Ցերկեր, հ. XXIV, էջ 315:

այս յերկու ֆորմուլաների միջև: Պարզ է, վոր նրանց միջև վոչ մի ընդհանուր բան չկա և չի կարող լինել:

Այսպիսով սոցիալիզմի մեջ կուլակների ներածելու բուխարինյան թեորիան նահանջ է դասակարգային կռիվի մարքս-լենինյան թեորիայից: Դա կաթեղեր-սոցիալիզմի թեորիային մոտենալ է:

Սրա մեջ է ընկ. Բուխարինի ու նրա բարեկամների բոլոր սխալների հիմքը:

Կարող են ասել, թե չարժե յերկար ընդարձակաբանել սոցիալիզմի մեջ կուլակների ներածելու բուխարինյան թեորիայի մասին, վորովհետև նա ինքն է խոսում, — և վոչ միայն խոսում է, այլ ճշում, — ընկ. Բուխարինի դեմ: Այդ ճիշտ չէ, ընկերներ: Քանի դեռ այդ թեորիան զրվանի տակ էր, կարելի յեր նրա վրա ուշադրություն չդարձնել — քիչ հիմարություններ կան արդյոք դանազան ընկերների զրվածքներում: մենք այդպես եւ վարվում եյինք մինչև վերջին ժամանակներս: Բայց վերջերս իրադրությունը փոքր ինչ փոխվեց: Մանր-բուր-

ժողովական տարերքը, վոր ծավալվեց վերջին տարիներում, սկսեց վոգեշնչել այդ հակամարքսիստական թեորիան՝ տալով նրան ակտուալ բնույթ: Այժմ արդեն չի կարելի ասել, թե նա գրվանի տակ ե: Այժմ նա, ընկ. Բուխարինի այդ տարրերնակ թեորիան, հավակնութուն ունի մեր կուսակցության մեջ յեղած աջ թեքման դրոշմը, ոպորտուն չի դմի դրոշմ դառնալու: Ուստի մենք արդեն չենք կարող այդ թեորիայի կողքով անցնել: Ուստի մենք պարտավոր ենք ծեծել-ջարդել նրան վորպես սխալ ու ֆեատակալ թեորիա՝ նրա համար, վորպեսզի մեր կուսակցական ընկերների համար հեշտացնենք աջ թեքման դեմ պայքարելը:

բ) ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՎԻ ՍՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընկ. Բուխարինի յերկրորդ սխալը, վոր բղխում ե նրա առաջին սխալից, անճիշտ, վոչ-մարքսիստական մոտեցումն ե դասակարգային կռիվի սրման հարցին, կապիտալիստական տարրերի կողմից խորհրդային իշխանության սոցիալիստական քաղաքա-

կանությանը ցույց տրվող դեմադրության ուժեղացման հարցին: Խոսքն ինչի՞ մասին ե այստեղ: Սրդյոք այն մասին չե՞, վոր կապիտալիստական տարրերն ավելի արագ են աճում, քան մեր տնտեսության սոցիալիստական սեկտորը, և վոր, դրա շնորհիվ, նրանք ուժեղացնում են իրենց դեմադրությունը, խարխլելով սոցիալիստական շինարարությունը: Վո՛չ, դրա մասին չե: Յե՛վ ընդամին ճիշտ ել չե, թե կապիտալիստական տարրերը սոցիալիստական սեկտորից իբր թե ավելի արագ են աճում: Յեթե այդ ճիշտ լիներ, ապա սոցիալիստական շինարարությունն արդեն կորստյան յեղրին կլիներ: Խոսքն այն մասին ե, վոր սոցիալիզմը հաջողությամբ արշավում ե կապիտալիստական տարրերի վրա, սոցիալիզմը կապիտալիստական տարրերից ավելի արագ ե աճում, դրա շնորհիվ կապիտալիստական տարրերի տեսակարար կշիռն ընկնում ե, և հենց այն պատճառով, վոր կապիտալիստական տարրերի տեսակարար կշիռն ընկնում ե, կապիտալիստական տարրերն զգում են

մահացու վտանգը և ուժեղացնում են իրենց
դիմադրությունը: Իսկ իրենց դիմադրու-
թյունն ուժեղացնելու հնարավորություն
ներանք դեռևս ունեն լինելով միայն այն պատ-
ճառով, Վոր համաշխարհային կապիտալիզ-
մը ներանց ողնություն է ցույց տալիս, այլև
այն պատճառով, Վոր, չնայած իրենց տեսա-
կարար կշռի անկմանը, չնայած սոցիալիզմի
աճման համեմատությամբ ներանց հարաբերա-
կան աճման իջնելուն, կապիտալիստական
տարրերի բացարձակ աճում այնուամենայ-
նիվ տեղի չի ունենում, և դա ներանց վորոշ
հնարավորություն է տալիս ուժեղ կուտա-
կելու, վորպեսզի դիմադրեն սոցիալիզմի
աճմանը: Հենց այս հիման վրա յե, Վոր
զաբաղակամ սվյալ ստադիայում, ուժերի հա-
բաբերակցության սվյալ պայմաններում, ծա-
ղում են դասակարգային կռիվ սրումը և քա-
ղաքի ու գյուղի կապիտալիստական տար-
րերի դիմադրության ուժեղացումը: Ընկ.
Բուխարինի և նրա բարեկամների սխալն
այն է, Վոր ներանք այս պարզ ու ակնհե-
ռյալությունը չեն ըմբռնում: Ներանք

սխալն այն է, Վոր ներանք զործին մոտենում
են լինելով մարքսիստներն, այլ քաղաքակ-
րեն՝ փորձելով դասակարգային կռիվ սրու-
մը բացատրել ամեն տեսակի պատահա-
կանությամբ, ասենք, խորհրդային աղա-
բատի «անպետքությամբ», տեղական ըն-
կերների «անզգուշ» քաղաքականությամբ,
ճկունության «բացակայությամբ», «չափա-
զանցումներով» (перегибам) և այլն և այլն:

Ահա, որինակ, ընկ. Բուխարինի «Սո-
ցիալիզմի ուղին» բրոշյուրից մի ցիտատ,
վորը միանգամայն վռն-մարքսիստական մո-
տեցում է ցուցադրում դասակարգային կռիվ
սրման հարցին.

«Մերթ այստեղ, մերթ այնտեղ դասակարգային
կռիվը գյուղում բռնկվում է իր նախկին արտահայ-
տություններով, ընդ վորում այդ սրումը սովորաբար
կուլակային տարրերն են առաջացնում: Յերբ, որի-
նակ, կուլակները կամ ուրիշի հաշվին հարստացող
ու թորհրդային փշխանության որդանները խցկված
մարդիկ սկսում են կրակել գյուղի ղեկավարների
վրա,—սա դասակարգային կռիվ արտահայտություն
է ամենասուր ձևով (Սա սխալ է, վորովհետև կռիվ
ամենասուր ձևն ապստամբությունն է: Ն. Սալիկ),
Սակայն այսպիսի դեպքերը սովորաբար լինում են

այնտեղ, վորտեղ տեղական խորհրդային տպարատը
դեռևս թույլ եւ Վանի այդ աստուածը թաղանթի,
քանի խորհրդային իշխանության բոլոր ստորին բջիջ-
ներն ամբանան, քանի տեղային գյուղական կուսակ-
ցական ու կոմյերիտական կազմակերպությունները
բարեկամիկն եւ ուժեղանան, այդ տեսակի յեղեղութ-
յունը, ինչպես այդ միասնական անկներն եւ, ավելի ու
ավելի հազվադեպ կհասնան, վերջիվերջո տոննէս կչա-
նան¹:

Այսպիսով դուքս եւ գալիս, վոր դասակար-
գային կռիւի սրումը բացատրւում եւ ապա-
րատային բնույթի պատճառներով, մեր
ստորին կազմակերպությունների պետքա-
կանությամբ կամ անպետքությամբ, թու-
լությամբ կամ ուժեղությամբ: Որինակ,
դուքս եւ գալիս, վոր Շախտիի բուրժուական
ինտելիգենտների վնասարարությունը, վորը
բուրժուական տարրերի կողմից խորհրդա-
յին իշխանությանը ցույց տրվող դիմադրու-
թյան մի ձև եւ կազմակարգային կռիւի
սրման մի ձև, բացատրւում եւ վնջ թե դա-

¹ Ն. Բուխարին, «Սոցիալիզմի ուղին ու բանվո-
րա-գյուղացիական դաշինքը», էջ 53—54: Ընդգծումն
իմն եւ Ի. Ս.:

սակարգային ուժերի հարաբերակցությամբ,
վնջ թե սոցիալիզմի աճումով, այլ մեր ա-
պարատի անպետքությամբ: Դուքս եւ գալիս,
վոր մինչև մասսայական վնասարարության
յերևան գալը Շախտիի շրջանում մեր ապա-
րատը լալն եր, իսկ հետո, մասսայական
վնասարարության յերևան գալու մոմենտին,
ապարատը չգիտես ինչու բոլորովին ան-
պետքացավ: Դուքս եւ գալիս, վոր մինչև
անցյալ տարի, յերբ մթերումներն ինքնա-
հոսով եյին ընթանում եւ դասակարգային
կռիւի առանձին սրում չկար մեղանում, մեր
կազմակերպությունները տեղերում լավ եյին
կամ մինչև իսկ իդեալական, իսկ անցյալ
տարվանից սկսած, յերբ կուլակության դի-
մադրությունն առանձնապես սուր ձևեր
ընդունեց, մեր կազմակերպությունները հան-
կարձ վատ ու բոլորովին անպետք դարձան:
Սա բացատրությունն չե, այլ բացատրու-
թյան ծաղրանք: Սա գիտությունն չե, այլ
գրքացություն:

Ինչով եւ բացատրւում այդ սրումը:

Յերկու պատճառով:

Նախ՝ մեր առաջխաղացումով, մեր հարձակումով, տնտեսութեան սոցիալիստական ձևերի աճումով թե՛ արդյունաբերութեան մեջ, թե՛ գյուղատնտեսութեան մեջ, մի աճումով, վորին ուղեկցում է քաղաքի ու գյուղի կապիտալիստների համապատասխան ջոկատների համապատասխան արտամղումը: Դրությունն այնպես է, վոր մենք ապրում ենք ըստ Լենինի «ով—ուս» ֆորմուլայի. արդյոք մենք նրանց, կապիտալիստների, մեջքը գետնով կտանք ու, ինչպես Լենինն էր արտահայտվում, վերջին վճռական մարտը կտանք նրանց, թե՛ նրանք մեր մեջքը գետնով կտան:

Յերկրորդ, նրանով, վոր կապիտալիստական տարրերը չեն ուզում հոժարակամ հեռանալ բեմից. նրանք դիմադրում են ու դիմադրելու յեն սոցիալիզմին, վորովհետև տեսնում են, վոր հասնում են իրենց գոյութեան վերջին օրերը: Իսկ դիմադրել նրանք առայժմ դեռ կարող են, վորովհետև, չնայած նրանց տեսակարար կշռի անկմանը, նրանք բացարձակ կերպով այնուամենայն

նիվ աճում են. մանր բուրժուազիան, քաղաքային ու գյուղական, իր միջավայրից ամեն օր, ամեն ժամ, ինչպես Լենինն էր ասում, արտադրում է կապիտալիստներ ու կապիտալիստականներ, և նրանք, այդ կապիտալիստական տարրերը, ձեռք են առնում բոլոր միջոցները նրա համար, վոր պաշտպանեն իրենց գոյությունը:

Պատմութեան մեջ դեռևս չեն յեղել այնպիսի դեպքեր, վոր մեռնող դասակարգերը հոժարակամ հեռանան բեմից: Պատմութեան մեջ դեռևս չեն յեղել այնպիսի դեպքեր, վոր մահացող բուրժուազիան իր գոյությունը պաշտպանելու համար չվորձի իր ուժերի բոլոր մնացորդները: Խորհրդային ստորին ապարատը լավ լինի մեզանում թե՛ վատ, մեր առաջխաղացումը, մեր հարձակումը կրճատելու յե կապիտալիստական տարրերը և արտամղելու նրանց, իսկ նրանք, մեռնող դասակարգերը, դիմադրելու յեն՝ ինչ ել վոր լինի:

Ահա թե վորն է դասակարգային կռիվ սրման սոցիալիստական հիմունքը:

Ընկ. Բուխարինի ու նրա բարեկամների սխալն այն է, վոր նրանք կապիտալիստների դիմադրութեան աճումը նույնացնում են նրանց տեսակարար կշռի աճման հետ: Բայց այդ նույնացումն իր վտարի տակ վոչ մի հող չունի: Հող չունի, վորովհետև յեթե նրանք, կապիտալիստները, դիմադրում են, ապա այդ բնավ չի նշանակում, թե նրանք ալիւլի ուժեղ են դարձել, քան մենք: Միանգամայն դրա հակառակն է: Մահացող դասակարգերը դիմադրում են վոչ թե այն պատճառով, վոր նրանք ալիւլի ուժեղ են դարձել, քան մենք, այլ այն պատճառով, վոր սոցիալիզմն ալիւլի արագ է աճում, քան նրանք, և նրանք ալիւլի թույլ են դառնում, քան մենք: Յեւ հենց այն պատճառով, վոր նրանք ալիւլի թույլ են դառնում, նրանք զգում են իրենց գոյութեան վերջին օրերը և հարկադրված են դիմադրելու բոլոր ուժերով, բոլոր միջոցներով:

Ահա թե վորն է դասակարգային կռիւ սրման ու կապիտալիստների դիմադրութեան մեխանիկան տվյալ պատմական մոմենտում:

Վերջը պետք է լինի կուսակցութեան քաղաքականութեանն իրերի աշակիսի դրութեան հանդեպ:

Այդ քաղաքականութեանն այն պետք է լինի, վոր զարթեցնենք բանվոր դասակարգին ու գյուղի շահագործվող մասսաներին, բարձրացնենք նրանց մարտունակութեանը և զարգացնենք նրանց մոբիլիզացիոն պատրաստականութեանը՝ քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի դեմ պայքարելու համար, դիմադրող դասակարգային թշնամիների դեմ պայքարելու համար: Դասակարգերի կռիւ մարքսիստական թեորիան, ի միջի այլոց, հենց նրանով է լավ, վոր նա հեշտացնում է բանվոր դասակարգի մոբիլիզացիան պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիների դեմ:

Վերջն է սոցիալիզմի մեջ կապիտալիստների ներաճելու բուխարինյան թեորիայի ու դասակարգային կռիւ սրման հարցի բուխարինյան ըմբռնման վնասը:

Այն, վոր այդ թեորիան քննեցնում է բանվոր դասակարգին, խարխուլում է մեր յերկրի

Ընկ. Բուխարինի ու նրա բարեկամների սխալն այն է, վոր նրանք կապիտալիստներին դիմադրութեան աճումը նույնացնում են նրանց տեսակարար կշռի աճման հետ: Բայց այդ նույնացումն իր վտարի տակ վոչ մի հող չունի: Հող չունի, վորովհետև յեթե նրանք, կապիտալիստները, դիմադրում են, ապա այդ բնավ չի նշանակում, թե նրանք ափելի ուժեղ են դարձել, քան մենք: Միանգամայն դրա հակառակն է: Մահացող դասակարգերը դիմադրում են վնչ թե այն պատճառով, վոր նրանք ափելի ուժեղ են դարձել, քան մենք, այլ այն պատճառով, վոր սոցիալիզմն ափելի արագ է աճում, քան նրանք, և նրանք ափելի թույլ են դառնում, քան մենք: Յեւ իհնայն պատճառով, վոր նրանք ափելի թույլ են դառնում, նրանք զգում են իրենց գոյութեան վերջին օրերը և հարկադրված են դիմադրելու բոլոր ուժերով, բոլոր միջոցներով:

Ահա թե վորն է դասակարգային կռիւ սրման ու կապիտալիստների դիմադրութեան մեխանիկան տվյալ պատմական մոմենտում:

Վերը պետք է լինի կուսակցութեան քաղաքականութեանն իրերի ալպիսի դրութեան հանդեպ:

Այդ քաղաքականութեանն այն պետք է լինի, վոր զարթեցնենք բանվոր դասակարգին ու գյուղի շահագործվող մասսաներին, բարձրացնենք նրանց մարտունակութեանը և զարգացնենք նրանց մոբիլիզացիոն պատրաստականութեանը՝ քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի դեմ պայքարելու համար, դիմադրող դասակարգային թշնամիների դեմ պայքարելու համար: Դասակարգերի կռիւ մարքս-լենինյան թեորիան, ի միջի այլոց, հենց նրանով է լավ, վոր նա հեշտացնում է բանվոր դասակարգի մոբիլիզացիան պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիների դեմ:

Վերն է սոցիալիզմի մեջ կապիտալիստների ներաճելու բուխարինյան թեորիայի ու դասակարգային կռիւ սրման հարցի բուխարինյան ըմբռնման փնտր:

Այն, վոր այդ թեորիան քննցնում է բանվոր դասակարգին, խարխուլում է մեր յերկրի

հեղափոխական ուժերի մորիլիզացիոն պատ-
րաստականությունը, դեմոքրիլիզացիայի յի
յենթարկումը բանվոր դասակարգին ու հեշ-
տացումն է կապիտալիստական տարրերի
հարձակումը Խորհրդային իշխանության դեմ:

գ) ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընկ. Բուխարինի յերրորդ սխալը վերա-
բերում է գյուղացիության հարցին: Հայտնի
յի, վոր գյուղացիության հարցը մեղանում
մեր քաղաքականության կարևորագույն հար-
ցերից մեկն է: Գյուղացիությունը մեր պայ-
մաններում բաղկացած է սոցիալական տար-
բեր խմբավորումներից, այն է՝ չքավորու-
թյունից, միջակներից ու կուլակներից: Հաս-
կանալի յի, վոր մեր վերաբերմունքը դեպի այդ
խմբավորումները միատեսակ չի կարող լինել:
Չքավորությունը վորպես բանվոր դասակար-
գի հենադրան, միջակը վորպես դաշնակից է կու-
լակը վորպես դասակարգային թեմամի,—այս
է մեր վերաբերմունքը դեպի այդ սոցիա-
լական խմբավորումները: Այս ամենը հաս-
կանալի յի է հանրահայտ: Սակայն ընկ.

Բուխարինն այս դործի վրա փոքր ինչ այլ
կերպ է նայում: Գյուղացիությունը բնու-
թագրելիս նրա մոտ շերտավորման փաստը
դուրս է ընկնում, ինչ-վոր տեղ անհայտա-
նում է սոցիալական խմբավորումների առ-
կայությունը, և մնում է լոկ մի վորշ բիծ, վորը
գյուղ է կոչվում: Նրա մոտ կուլակն էլ—
կուլակ չի, միջակն էլ—միջակ չի, այլ ինչ-
վոր համատարած աղքատություն է գյուղում:
Նա հենց այդպես էլ ասում էր այստեղ իր
ձառի մեջ. միթե մեր կուլակը կարող է կու-
լակ կոչվել: Չի՞ վոր դա աղքատ է,—ասում
էր նա: Իսկ մեր միջակը—միթե նա նման
է միջակի,—հայտարարում էր այստեղ ընկ.
Բուխարինը:—Չի՞ վոր դա մի աղքատ է,
վորը կիսաքաղց է ապրում: Հասկանալի յի,
վոր գյուղացիության նկատմամբ այսպիսի
հայացքն արմատապես սխալ հայացք է, վորն
անհամատեղելի յի լենինիզմի հետ:

Լենինն ասում էր, վոր գյուղացիությու-
նը կապիտալիստական վերջին դասակարգն է:
Ճիշտ է արդյոք այս դրույթը: Այո, ան-
պայման ճիշտ է: Ինչո՞ւ յի գյուղացիություն-

հեղափոխական ուժերի մորիլիզացիոն պատ-
րաստականությունը, դեմոքրիլիզացիայի յի
յենթարկում բանվոր դասակարգին ու հեշ-
տացնում և կապիտալիստական տարրերի
հարձակումը խորհրդային իշխանության դեմ:

գ) ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընկ. Բուխարինի յերրորդ սխալը վերա-
բերում և գյուղացիության հարցին: Հայտնի
յե, վոր գյուղացիության հարցը մեղանում
մեր քաղաքականության կարեորագույն հար-
ցերից մեկն և: Գյուղացիությունը մեր պայ-
մաններում բաղկացած և սոցիալական տար-
բեր խմբավորումներից, այն և՛ չքավորու-
թյունից, միջակներից ու կուլակներից: Հաս-
կանալի յե, վոր մեր վերաբերմունքը դեպի այդ
խմբավորումները միատեսակ չի կարող լինել:
Չքավորությունը վորպես բանվոր դասակար-
գի հեմադան, միջակը վորպես դաճնակից և կու-
լակը վորպես դասակարգային բճնամի,—այս
և մեր վերաբերմունքը դեպի այդ սոցիա-
լական խմբավորումները: Այս ամենը հաս-
կանալի յե և հանրահայտ: Սակայն ընկ.

Բուխարինն այս գործի վրա վոքը ինչ ալլ
կերպ և նայում: Գյուղացիությունը բնու-
թագրիլիս նրա մոտ շերտավորման վիսսուր
դուրս և ընկնում, ինչ-վոր տեղ անհայտա-
նում և սոցիալական խմբավորումների առ-
կայությունը, և ֆուում և լոկ մի գորշ բիծ, վորը
գյուղ և կոչվում: Նրա մոտ կուլակն ևլ—
կուլակ չե, միջակն ևլ—միջակ չե, ալլ ինչ-
վոր համատարած աղքատություն և գյուղում:
Նա հենց այդպես ևլ ասում ևր այստեղ իր
ճառի մեջ. միթե մեր կուլակը կարող և կու-
լակ կոչվել: Չե՞ վոր դա աղքատ և,—ասում
ևր նա: Իսկ մեր միջակը—միթե նա նման
և միջակի,—հայտարարում ևր այստեղ ընկ.
Բուխարինը:—Չե՞ վոր դա մի աղքատ և,
վորը կիսաղքաղց և ապրում: Հասկանալի յե,
վոր գյուղացիության նկատմամբ այսպիսի
հայացքն արմատապես սխալ հայացք և, վորն
անհամատեղելի յե լենինիզմի հետ:

Լենինն ասում ևր, վոր գյուղացիությու-
նը կապիսալիսական վերջին դասակարգն և:
Ճիշտ և արդյոք այս դրույթը: Այո, ան-
պայման ճիշտ և: Ինչո՞ւ յե գյուղացիությու-

նը վորակվում վորպես կապիտալիստական
 վերջին դասակարգ: Այն պատճառով, վոր
 հիմնական յերկու դասակարգերից, վորոնցից
 բաղկացած է մեր հասարակութունը, գյու-
 ղացիութունն այն դասակարգն է, վորի
 տնտեսութունը խարսխվում է մասնավոր
 սեփականության ու մանր-ապրանքային ար-
 տադրության վրա: Այն պատճառով, վոր
 գյուղացիութունը, քանի դեռ նա մանր-ապ-
 րանքային արտադրութուն վարող գյուղա-
 ցիութուն է մնում, իր միջից շարունակ ու
 անընդհատ կապիտալիստներ է արտադրում
 և չի կարող չարտադրել: Այս հանգամանքը
 մեզ համար վճռողական նշանակութուն ու-
 նի բանվոր դասակարգի ու գյուղացիության
 դաշինքի պրոբլեմի նկատմամբ մեր ունե-
 ցած մարքսիստական վերաբերմունքի հար-
 ցում: Այս նշանակում է, վոր մեզ հարկա-
 վոր է վնչ ամեն մի դաշինք գյուղացիու-
 թյան հետ, այլ միայն այնպիսի դաշինք,
 վորը խարսխվում է գյուղացիության կա-
 պիտալիստական տարրերի դեմ պայքարե-
 լու վրա: Ինչպես տեսնում եք, Լենինի թե-

զիսը գյուղացիության՝ վորպես կապիտա-
 լիստական վերջին դասակարգի՝ մասին վնչ
 միայն չի հակասում բանվոր դասակարգի
 ու գյուղացիության դաշինքի գաղափարին,
 այլ, ընդհակառակը, հիմք է տալիս այդ դա-
 շինքին, վորպես բանվոր դասակարգի ու
 գյուղացիության մի դաշինքի, վորն ուղղ-
 ված է մեր տնտեսության կապիտալիստա-
 կան տարրերի դեմ: Լենինն այս թեզիսն ա-
 ռաջադրել է նրա համար, վորպեսզի ցույց
 տա, վոր բանվոր դասակարգի ու գյուղա-
 ցիության դաշինքը կարող է հաստատուն
 լինել միայն այն դեպքում, յեթե նա խա-
 րսխվում է հենց այն կապիտալիստական
 տարրերի դեմ պայքար մղելու վրա, վո-
 րոնց գյուղացիութունն արտադրում է իր
 միջից:

Ընկ. Բուխարինի սխալն այն է, վոր նա
 չի ըմբռնում ու չի ընդունում այս պարզ
 բանը, նա մոռանում է գյուղի սոցիալական
 խմբավորումների մասին, նրա տեսադաշտից
 չքանում են կուլակներն ու չքավորութու-
 նը և մնում է միմիայն միապաղաղ միջա-

կային մասսան: Սա ընկ. Բուխարինի ան-
կասկածելի թեքումն և դեպի աջ, ի հակա-
դրություն «ձախ», տրոցկիստական թեք-
ման, վորը գյուղում չի տեսնում սոցիալա-
կան այլ խմբավորումներ, բացի չքավո-
րությունից ու կուլակներից, և վորի տեսա-
դաշտից չքանում են միջակները:

Վճրն և տարբերությունը տրոցկիզմի ու
ընկ. Բուխարինի խմբի միջև գյուղացիու-
թյան հետ դաշինք ունենալու հարցում:
Այն, վոր տրոցկիզմը դեմ և արտահայտվում
գյուղացիության միջակային մասսաների
հետ հաստատուն դաշինքի քաղաքականու-
թյուն վարելուն, իսկ բուխարինյան խում-
բը գյուղացիության հետ ամեն մի դաշինք
ունենալու կողմն է: Կարիք ել չկա ապացու-
ցելու, վոր այս յերկու դերձավորումներն
ել սխալ են և նրանք մեկը մյուսին ար-
ժեն:

Լենինիզմն անպայման գյուղացիության
հիմնական մասսաների հետ հաստատուն դա-
շինք ունենալու, միջակների հետ դաշինք ու-

նենալու կողմն և, բայց վոչ ամեն մի դաշին-
քի, այլ միջակների հետ այնպիսի դաշինք
ունենալու կողմն և, վորն ապահովում և
բանվոր դասակարգի ղեկավար դերը, ամ-
բապնդում և պրոլետարիատի գեղատառն
ու ճեփացնում և դասակարգերի վոչնչացման
գործը:

«Բանվոր դասակարգի և գյուղացիության միջև
համաձայնություն ասելով,—ասում և Լենինը,—կա-
րելի չե հասկանալ ինչ վոր կամենաս Յեթե հկա-
տի չունենանք, վոր բանվոր դասակարգի տեսակե-
տից համաձայնությունը թուլատրելի, ճիշտ և
սկզբունքորեն հնարավոր և լոկ այն ժամանակ, յերբ
նա աջակցում և բանվոր դասակարգի գեղատառնա-
յին ու մեկն և այն միջոցներից, վորոնք ուղղված
են դասակարգերը վոչնչացնելուն, ապա գյուղացիու-
թյան հետ բանվոր դասակարգի համաձայնություն
ունենալու ֆորմուլան, իհարկե, մնում և մի այնպի-
սի ֆորմուլա, վոր հենց անց են կացնում իրենց
հայացքներում խորհրդային լեռնանության բոլոր
թշնամիները և գեղատառնայի բոլոր թշնամիե-
րը»¹:

¹ Լենին, Յերկեր, հատ. XXVI, էջ 387:

Յեղ ապա.

«Այժմ,—ասում ե Լենինը,—պրոլետարիատն իր ձեռքում բռնած ունի իշխանութիւնն ու ղեկավարում ե այն: Նա ղեկավարում ե գյուղացիութիւնը: Ի՞նչ ե նշանակում այդ—ղեկավարել գյուղացիութիւնը: Այդ նշանակում ե, նախ՝ դասակարգելի վոչնչացման գիծ տանել և վոչ թե գիծ՝ մանր արտադրողի վրա: Յեթե մենք շեղվեցինք այս գծից, վոր արժատական ու հիմնական գիծ ե, այն ժամանակ մենք կդադարեցինք սոցիալիստ լինելուց և կընկնեցինք այն մանր բուրժուականների բանակը, ևս-եքնելի ու մենշևիկների բանակը, վորոնք այժմ պրոլետարիատի ամենալուսեղիմ թշնամիներն են»¹:

Ահա այն, Լենինի հայացքը գյուղացիութեան հիմնական մասսաների հետ դաշինք ունենալու, միջակների հետ դաշինք ունենալու հարցի մասին:

Ընկ. Բուխարինի խմբի սխալը միջակի հարցում այն ե, վոր նա չի տեսնում միջակի յերկակի բնութիւնը, յերկակի դրութիւնը ըստվոր դասակարգի ու կապիտալիստների միջև: «Միջակը տատանվող դասակարգ

ե», ասում ե Լենինը: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր միջակը, մի կողմից՝ աշխատավոր ե, վոր նրան մոտեցնում ե բանվոր դասակարգին, իսկ, մյուս կողմից՝ սեփականատեր, վոր նրան մոտեցնում ե կուլակին: Այստեղից՝ միջակի տատանումները: Յեղ միայն թեորիատիկա չե, վոր ճիշտ ե այս: Այդ տատանումներն արտահայտվում են նաեւ պրակտիկայում ամեն ոք, ամեն ժամ:

«Գյուղացին,—ասում ե Լենինը,—վորպես աշխատավոր, ձգում ե ղեպի սոցիալիզմ, բանվորների ղիկտատուրան դերադասելով բուրժուազիայի ղիկտատուրայից: Գյուղացին, վորպես հաց վաճառող, ձգում ե ղեպի բուրժուազիան, ղեպի ազատ առևտուրը, այսինքն հետ ղեպի «սովոր», ղեպի հին, «վաղեմի» կապիտալիզմը»¹:

Այս պատճառով դաշինքը միջակի հետ կարող ե հաստատուն լինել միայն այն դեպքում, յեթե նա ուղղված ե կապիտալիստական տարրերի դեմ, ընդհանրապես կապիտալիզմի դեմ, յեթե նա ապահովում ե

¹ Նույն տեղում, էջ 399—400.

¹ Լենին, Յերկեր, հատոր XXIV, էջ 314:

բանվոր դասակարգի ղեկավար գերն այդ դաշինքում, յեթե նա հեշտացնում ե դասակարգերի վոչնչացման գործը:

Տարրերնակ ե, վոր քնկ. Բուխարինի խումբը մոռանում ե այս պարզ ու հասկանալի բաները:

դ) Նեֆի Յեվ, ՇՈՒԿԱՅԱԿԱՆ,
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկ. Բուխարինի չորրորդ սխալը վերաբերում ե նեպի հարցին: Ընկ. Բուխարինի սխալն այստեղ այն ե, վոր նա չի տեսնում նեպի յերկկողմանիությունը, նա նեպի միայն մի կողմն ե տեսնում: Յերբ մենք մտցնում եյինք նեպը 1921 թվականին, այն ժամանակ նրա սուր ծայրը մենք ուղղում եյինք ռազմական կոմունիզմի դեմ, այնպիսի ռեֆիմի ու կարգերի դեմ, վերոնք բացառում են առևտրի վաճառքը ազատություն: Մենք գտնում եյինք ու գտնում ենք, վոր նեպը նշանակում ե առևտրի վաճառքը ազատություն: Բանի այս կողմն ընկ. Բուխարինը միտն ե պահել: Յեվ այդ շատ լավ ե:

Բայց ընկ. Բուխարինը սխալվում ե, յենթադրելով, թե բանի այս կողմով սպառվում ե նեպը: Ընկ. Բուխարինը մոռանում ե, վոր նեպն ուրիշ կողմ ել ունի: Բանն այն ե, վոր նեպը բնավ չի նշանակում առևտրի լիակատար ազատություն, գների ազատ շուկայում: Նեպն առևտրի ազատություն ե վաճառահաններում, վաճառքը նշանակներում, բնդ վորում ապանավում ե պեսուրյան կարգավորող դերը ե նրա դերը ռեկայում: Հենց այս ե նեպի յերկրորդ կողմը: Ընդ վորում՝ նեպի այս կողմն ալիլի պակաս կարեոր չե, յեթե վոչ ալիլի կարևոր, քան նրա առաջին կողմը: Մեզանում շուկայում գների ազատ խաղ չկա, ինչպես այդ սովորաբար լինում ե կապիտալիստական յերկիրներում: Մենք ենք վորոշում հիմնականում հացի գները: Մենք ենք վորոշում արդյունաբերական ապրանքների գները: Մենք աշխատում ենք կիրառել ինքնարժեքի իշեցման ե արդյունաբերական ապրանքների գների իշեցման քաղաքականություն, ձգտելով պահպանել դու-

դատնետեսական մթերքները գները կայուն դրությունը: Միթե պարզ չե, վոր շուկայի այսպիսի հատուկ ու սպեցիֆիկ կարգեր կապիտալիստական յերկիրներում ընդհանրապես չեն լինում:

Սրանից հետևում է, վոր, քանի դեռ նեպ կա, պետք է պահպանվեն նրա յերկու կողմն ել, թե առաջին կողմը, վորն ուղղված է ռազմական կոմունիզմի ռեֆիմի դեմ ու նպատակ ունի առևտրի վորո ազատություն ապահովել, թե յերկրորդ կողմը, վորն ուղղված է առևտրի լիակատար ազատության դեմ ու նպատակ ունի ապահովելու պետության կարգավորող դերը շուկայում: Վոչնչացրեք այս կողմերից մեկը, — և դուք նեպ չեք ունենա:

Ընկ. Բուխարինը կարծում է, վոր նեպին կարող է վտանգ սպառնալ միայն «ձախից», այն մարդկանց կողմից, վորոնք ցանկանում են լիկվիդացիայի յենթարկել առևտրի ամեն մի ազատություն: Սա ճիշտ չե: Սա ամենակոպիտ սխալ է: Մահալանդ վոր այդպիսի վտանգն այժմ ամենից քիչ է

իրական, վորովհետև հիմա մեղանում մեր տեղական ու կենտրոնական կազմակերպություններում չկան, կամ համարյա չկան այնպիսի մարդիկ, վորոնք չհասկանային առևտրի վորո ազատություն պահպանելու ամբողջ անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը: Շատ ափելի ռեալ է աջից յեկող վտանգը, վտանգն այն մարդկանց կողմից, վորոնք ցանկանում են լիկվիդացիայի յենթարկել պետության կարգավորող դերը շուկայում, վորոնք ցանկանում են «ազատագրել» շուկան և այդպիսով առևտրի լիակատար ազատության դարագլուխ բանալ: Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր նեպն աջից վիժեցնելու այս վտանգը շատ ափելի ռեալ է այժմ: Հարկավոր չե մոռանալ, վոր մանր բուրժուական տարերքը հենց այս ուղղությամբ է աշխատում, նեպն աջից վիժեցնելու ուղղությամբ: Հարկավոր է նմանապես հիշել, վոր կուլակների և ուսուր տարերի վայնասունները, վայնասունները սպեկուլանտների ու մեծագործների, վորոնց հաճախ յենթարկվում են մեր ընկեր-

ներեց շատերը, նույնը հենց այս կողմից են
ուժեղացան: Այն փաստը, վոր ընկ. Բուխա-
րինը չի տեսնում նեպի վիժեցման այս
յերկրորդ, իսկապես ուսուցիչ, վտանգը, — այս
փաստն անկասկածելի կերպով խոսում և
այն մասին, վոր նա յենթարկվել և մանր-
բուրժուական տարերքի ճնշմանը:

Ընկ. Բուխարինն առաջարկում և «նոր-
մալացնել» շուկան ու «մանեվրել» հացի
մթերման գներով ըստ շրջանների, այսինքն
բարձրացնել հացի գները: Այս ի՞նչ և նշա-
նակում: Այս նշանակում և, վոր նրան չեն
բավարարում շուկայի խորհրդային պայման-
ները, նա ցանկանում և արգելակներով իջեց-
նել պետություն կարգավորող դերը շուկա-
յում և առաջարկում և համաձայնել զիջումների
անելու մանր-բուրժուական տարերքին, վոր-
ը վիժեցնում և նեպն աջից:

Մի բոլոր յենթադրենք, թե մենք հե-
տևեցինք ընկ. Բուխարինի խորհուրդներին:
Դրանից ի՞նչ կստացվի: Մենք հացի գներն,
ասենք, բարձրացնում ենք աշնանը, մթեր-
ման ժամանակաշրջանի սկզբին: Բայց քա-

նի վոր շուկայում միշտ ել կան մարդիկ
ամեն տեսակի սպեկուլանտներ ու մեծա-
զնորդներ, վորոնք հացի համար կարող են
յերեք անգամ ավելի վճարել, և քանի վոր
մենք չենք կարող սպեկուլանտների հետևից
հասնել, վորովհետև նրանք ընդամենը հա-
զիվ մի տասնյակ միլիոն փութ են գնում,
իսկ մենք պետք և գնենք հարյուրավոր
միլիոն փութեր, — ուստի և հացատերերը, մի-
ևնույն և, պետք և պահեն հացը՝ սպասելով
գների հետագա բարձրացման: Հետևապես
գարնան դեմ, յերբ հենց պետությունը զըլ-
խավորապես սկսում և հացի հիմնական կա-
րիք զգալ, մենք պետք և կրկին ավելաց-
նենք հացի գինը: Բայց ի՞նչ և նշանակում
հացի գինը գարնանն ավելացնել: Այդ նշա-
նակում և մորթել չքավորությանը և գյուղի
սակավազոր շերտերին, վորոնք հենց իրենք
հարկադրված են գարնանը լրացուցիչ հաց
գնելու՝ մասամբ սերմացուի համար, մասամբ
ուտելու համար, հենց այն հացը, վոր աշ-
նանը նրանք վաճառել էին ավելի եժան
գնով: Արդյոք մենք կկարողանանք այս գոր-

ժառանգություններէ հետեանքով վորեւ լուրջ
բան ձեռք բերել՝ բավարար քանակով հաց
ստանալու իմաստով: Ամենից հալանականն
ե, վոր չենք կարողանա, վորովհետեւ միշտ
եղ կգտնվեն սպեկուլանտներ ու մեծագնորդ-
ներ, վորոնք կկարողանան նույն ալի հա-
ցի համար դարձյալ կրկնակի ու յեռակի
վճարել: Հետեապես, մենք պետք ե պատ-
րաստ լինենք հացի գների նոր բարձրաց-
ման, զուր ջանալով սպեկուլանտներէց ու
մեծագնորդներէց գերազանցել:

Բայց սրանից դուրս ե գալիս, վոր, մեկ
անգամ հացի գների բարձրացման ուղին
վորտք դնելով՝ մենք պետք ե այնուհետեւ եղ
ցած գլորվենք, բավարար քանակով հաց
ստանալու յերաշխիք հունենալով:

Բայց բանը սրանով չի վերջանում: Նախ՝
հացի մթերման գները բարձրացնելով՝ մենք
ստիպված պետք ե լինենք հետո հումքի գներն
եղ բարձրացնել, վորպեսզի գլուղատնտեսու-
թյան մթերքների գներում վորոշ համեմատա-
կանություն պահպանենք: Յերկրորդ՝ հացի
մթերման գները բարձրացնելով՝ մենք չենք

կարող պահպանել հացի ցածր գինը քաղաքնե-
րում, — հետեապես ստիպված կլինենք բարձ-
րացնելու նաեւ հացի վաճառքի գները: Իսկ վո-
րովհետեւ մենք բանվորներին չենք կարող նե-
ղացնել ու չպետք ե նեղացնենք, — մենք պետք
ե արագացրած տեմպով բարձրացնենք աշ-
խատավարձը: Բայց սա չի կարող չհասցնել
նաեւ արդյունաբերական ապրանքների գնե-
րը բարձրացնելուն, վորովհետեւ հակառակ
գեպքում կարող ե ստացվել միջոցների հո-
սեցում (перекачка) քաղաքից դուրս՝ հա-
կառակ ինդուստրացման շահերի: Դրա հե-
տեանքով մենք ստիպված պետք ե լինենք
արդյունաբերական ապրանքների ու դու-
ղատնտեսական մթերքների գները հավա-
սարեցնել վնչ թե իջնող կամ գոնե կայու-
նացված գների բաղայի վրա, այլ ինչպես
հացի, այնպես ել արդյունաբերական ապ-
րանքների բարձրացող գների բաղայի վրա:
Այլ կերպ ասած՝ մենք պետք ե արդյունա-
բերական ապրանքների ե գլուղատնտես-
կան մթերքների քանգացման ընթացք բը-
նենք: Դիվար չե հասկանալ վոր գներով

այս կերպ «մանեվրելը» չի կարող չհասցնել
զների խորհրդային քաղաքականության
լիակատար լիկվիդացիային, շուկայում պե-
տության ունեցած կարգավորող դերի լիկ-
վիդացիային և մանր-բուրժուական տա-
րերքի լիակատար սանձալուծմանը: Ո՛ւմ
ձեռնառու կլինի՝ այս: Փաղաքի ու գյուղի
ուսուցիչ խավերին միայն, վերսկսված թանգ-
արդյունաբերական ապրանքներն ու գյու-
ղատնտեսական մթերքները չեն կարող ան-
մատչելի չդառնալ ինչպես լանդոր դասա-
կարգի համար, այնպես եւ գյուղի չքավորու-
թյան ու սակավազոր խավերի համար: Շա-
հում են կուլակներն ու ուսուցիչները, նեպ-
մաններն ու այլ ուսուցիչ դասակարգերը:

Այս եւ զողում կլինի, բայց յուրորինակ
զողում, — զողում գյուղի ու քաղաքի ունե-
վոր խավերի հետ: Բանվորներն ու գյուղի
սակավազոր խավերը լիակատար իրավունք
կունենան հարցնելու մեզ՝ մենք ո՞ւմ իշխա-
նությունն ենք, բանվորա-գյուղացիակամն,
թե՞ կուլակային-նեպմանական:

Կապերի խղում բանվոր դասակարգի ու

գյուղի սակավազոր խավերի հետ, զողում
գյուղի ու քաղաքի ուսուցիչ խավերի հետ, —
ահա թե ինչի պատճառով եւ հասցնեն շուկայի
բուխարինյան «նորմալացումը» և հացի դե-
րով «մանեվրելն» ըստ շրջանների:

Պարզ եւ, վոր կուսակցությունը չի կա-
րող այս կորստաբեր ուղին բռնել:

Թե ինչ աստիճան խճճվել են ընկ. Բուխա-
րինի մոտ նեպլի վերաբերյալ բոլոր հասկացո-
ւթյուններն ու ինչքան ամուր եւ նա դերի
դարձել մանր-բուրժուական տարերքին, —
այդ յերևում ե, ի միջի այլոց, այն ավելի-
քան բացասական վերաբերմունքից, վոր
նա ցուցաբերում ե դեպի քաղաքի ու գյու-
ղի միջև, պետութայն ու գյուղացիութայն
միջև կատարվող ապրանքաշրջանառութայն
նոր ձևերի հարցը: Նա վրդովված ե ու ա-
ղաղակում ե այն բանի դեմ, վոր պետու-
թյունը գյուղացիութայն համար ապրանք-
ներ մատակարարող ե դարձել, իսկ գյու-
ղացիությունը դառնում ե պետութայն հա-
մար հաց մատակարարող: Նա այս բանը
համարում ե նեպլի բոլոր կանոնների խախ-

տում, քիչ և մնում, վոր նեպի վիժեցում համարիւ Հարց և ծագում. ինչո՞ւ, ի՞նչ հիման վրա: Ի՞նչ վատ բան կարող է լինել նրանում, վոր պետութիւնը, պետական արդյունաբերութիւնը գյուղացիութեան համար ապրանքներ մատակարարող է, իսկ գյուղացիութիւնը արդյունաբերութեան համար, պետութեան համար հաց մատակարարող: Մարքսիզմի և նեպի մարքսիստական քաղաքականութեան տեսակետից ի՞նչ վատ բան կարող է լինել նրանում, վոր գյուղացիութիւնն արդէն պետական արդյունաբերութեան կարիքների համար բամբակ, ճակնդեղ, վուշ մատակարարողի յի վերածվել, իսկ պետական արդյունաբերութիւնը — գյուղատնտեսութեան այդ ճյուղերի համար քաղաքային ապրանքներ, սերմացու և արտադրութեան գործիքներ մատակարարողի: Կոնտրակտացիայի մեթոդը քաղաքի ու գյուղի միջև կատարվող ապրանքաշրջանառութեան այս նոր ձևերը սահմանելու հիմնական մեթոդն է այստեղ: Բայց մի՞թե կոնտրակտացիայի մեթոդը հա-

կանում է նեպի պահանջներին: Ի՞նչ վատ բան կարող է լինել նրանում, վոր գյուղացիութիւնը պետութեան մատակարար է դառնում նաև հացի գծով, և վոչ թե միայն բամբակի, ճակնդեղի, վուշի գծով՝ շնորհիվ կոնտրակտացիայի նույն այդ մեթոդի: Ինչո՞ւ փոքր պարտիաներով կատարվող առևտուրը, մանր առևտուրը կարող է ապրանքաշրջանառութիւն կոչվել, իսկ ապրանքի գների ու վորակի վերաբերյալ վաղորոք կադմված պայմանագրերի համեմատ (կոնտրակտացիա) խոշոր պարտիաներով կատարվող առևտուրը չի կարող ապրանքաշրջանառութիւն համարվել: Վճարտելից է այս անհեթեթութիւնը: Մի՞թե դժվար է հասկանալ, վոր քաղաքի ու գյուղի միջև կոնտրակտացիա կապելու մեթոդով կատարվող ապրանքաշրջանառութեան այս նոր մասսայական ձևերը ծագել են հենց նեպի հիման վրա, վոր նրանք մեր կազմակերպութիւնների արած խոշորագույն քայլն են դեպի առաջ ժողովրդական տնտեսութեան պլանային, սոցիալիստական դեկավարութիւնն ուժեղացնելու իմաստով:

Տարորինակ չէ՞ արդո՞ք, վոր ընկ. խու-
խարինն այս սարգ ու հասկանալի բաներն
ըմբռնելը մոռացել ե:

Ե) ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՏՆՄՊԻ
ՅԵՎ ԶՈՒՄԱՆ ՆՈՐ ԶԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջապես, ինդուստրիայի զարգացման
տեմպի և քաղաքի ու գյուղի միջև յեղած
զոդման նոր ձևերի հարցը: Այս հարցը
մեր տարաձայնությունների ամենակարևոր
հարցերից մեկն է: Այս հարցի կարևորու-
թյունն այն է, վոր նրա մեջ են կենտրոնա-
ցած կուսակցության տնտեսական քաղաքա-
կանության հարցերի վերաբերյալ մեր պրակ-
տիկ տարաձայնությունների բոլոր թեկերը:

Ի՞նչ բան են զոդման նոր ձևերը, մեր ալըն-
տեսական քաղաքականության տեսակետից
այդ ի՞նչ է նշանակում:

Ամենից առաջ այդ նշանակում է, վոր
բացի քաղաքի ու գյուղի միջև յեղած զոդ-
ման հին ձևերից, յերբ արդյունաբերու-
թյունը բավարարում էր գյուղացու գլխա-
վորապես աճանակացման պահանջմունքները

(չեթ, վոտնաման, առհասարակ ժանուֆակ-
տուրա և այլն), մեղ հարկավոր են զոդման
նաև նոր ձևեր, յերբ արդյունաբերությունը
բավարարելու յե գյուղացիական տնտեսու-
թյան առատաբան կարիքները (գյուղա-
տնտեսական մեքենաներ, տրակտորներ,
լավացրած սերմացու, պարարտանյութ և
այլն): Յեթե մենք առաջնորդվում բավարա-
րում ելինք գյուղացու գլխավորապես առա-
նական պահանջմունքները, քիչ շոշափելով
նրա տնտեսության արտադրական կարիք-
ները, ապա այժմ, շարունակելով բավարա-
րել գյուղացու առանձնական պահանջմունքնե-
րը, մենք պետք է ամբողջ թափով ուժ
տանք գյուղատնտեսական մեքենաներ,
տրակտորներ, պարարտանյութեր և այլն
մատակարարելուն, վորոնք ուղղակի կապ
ունեն գյուղատնտեսական արտադրու-
թյունը նոր տեխնիկական բազայով
վերակառուցելու հետ: Քանի դեռ խոս-
քը վերաբերում էր գյուղատնտեսության
վերականգնմանը և գյուղացիների կողմից
նախկին կալվածատիրական ու կուլակային

հողերը յուրացնելուն, մենք կարող եյինք բաժանանալ զողման հին ձևերով: Բայց այժմ, յերբ խոսքը վերաբերում է գյուղատնտեսության վերականգնմանը, այդ արդեն բաժան չէ: Այժմ հարկավոր է առաջ գնալ՝ ոգնելով գյուղացուն վերականգնելու գյուղատնտեսական արտադրությունը նոր տեխնիկայի ու կոլեկտիվ աշխատանքի բաղայի վրա:

Յերկրորդ, այդ նշանակում է, վոր մեր արդյունաբերությունը վերադինման հետ մեկտեղ մենք պետք է սկսենք լրջորեն վերադինել նաև գյուղատնտեսությունը: Մենք վերադինում ենք և մասամբ արդեն վերադինել ենք մեր արդյունաբերությունը, նրա տակ տեխնիկական նոր բազա քաշելով, նրան նոր բարելավված մեքենաներ, նոր բարելավված կադրեր մատակարարելով: Մենք նոր գործարաններ ու ֆաբրիկաներ ենք կառուցում, մենք վերականգնում ու ընդարձակում ենք հսկրը, մենք զարգացնում ենք մետաղագործությունը, քիմիան, մեքենաշինությունը: Այս հիմքի վրա ա-

ճում են քաղաքներ, բաղմանում են նոր արդյունաբերական կետեր, ընդլայնվում են հսկրը: Այս բաղայի վրա աճում է պարենային մթերքների պահանջարկը, արդյունաբերության համար հարկավոր հումքի պահանջարկը: Իսկ գյուղատնտեսությունը մնում է իր հին գործիքներով, հողի մշակության հին, պապենական մեթոդներով, հին, պրիմիտիվ, այժմ արդեն անպետք կամ համարյա անպետք տեխնիկայով, տնտեսավարման ու աշխատանքի հին մանր-գյուղացիական անհատական ձևերով: Ի՞նչ արժե, որինակ, այն փաստը, վոր մինչև հեղափոխությունը մեզանում կար մոտ 16 միլիոն ծուխ, իսկ այժմ կա 25 միլիոնից վոչ-պակաս: Ի՞նչ է ասում այս ամենը, յեթե վոչ այն, վոր գյուղատնտեսությունը գնալով ավելի ցիրուցան, մասնատված (раздробленный) բնույթ է ստանում: Իսկ ցրուցան մանր տնտեսությունների բնորոշ դիժն այն է, վոր նրանք անդոր են պատշաճ չափով ոգտագործելու տեխնիկան, մե-

քենաները, տրակտորները, աղբոնոմիական
գիտութեան տվյալները, վոր նրանք սա-
կավ-ապրանքային տնտեսութեաններ են:
Այստեղից՝ գյուղատնտեսական մթերքները
ապրանքային յերունքի պակասը: Այստե-
ղից՝ քաղաքի ու գյուղի միջև, արդշունա-
բերութեան ու գյուղատնտեսութեան միջև
խզում առաջանալու վտանգը: Այստեղից՝
գյուղատնտեսութեանը թափ հաղորդելու,
նրան մեր ինդուստրիայի զարգացման տեմ-
պին հասցնելու անհրաժեշտութեանը: Յեւ
ահա, վորպեսզի այդ խզման վտանգը չլի-
նի, հարկավոր է սկսել լրջորեն վերադիմել
գյուղատնտեսութեանը նոր տեխնիկայի բա-
ղայի վրա: Իսկ նրան վերադիմելու համար
հարկավոր է մասնատված գյուղացիական
տնտեսութեաններն աստիճանաբար միա-
վորել խոշոր տնտեսութեանների մեջ,
կոլեկտիվները մեջ, հարկավոր՝ և դու-
ղատնտեսութեանը կառուցել կոլեկտիվ աշ-
խատանքի բաղայի վրա, հարկավոր է խո-
շորացնել կոլեկտիվները, հարկավոր է դար-

գացնել հին ու նոր խորհրտնտեսութեան-
ները, հարկավոր է կոնտրակտացիայի մաս-
սայական ձևերը սխառմատիկաբար կիրա-
ռել գյուղատնտեսութեան բոլոր հիմնական
ճյուղերի նկատմամբ, հարկավոր է դար-
գացնել մեքենա-տրակտորային կայանների
սխառմը, վորոնք ոգնում են գյուղացի-
ութեանը յուրացնելու նոր տեխնիկան և
կոլեկտիվացնելու աշխատանքը,—մի խոս-
քով, հարկավոր է գյուղացիական մանր
տնտեսութեաններն աստիճանաբար փոխա-
դրել խոշոր կոլեկտիվ արտադրութեան բա-
ղայի վրա, վորովհետև միայն հանրային
տիպի խոշոր արտադրութեանն է ընդու-
նակ ամբողջ թափով ոգտադործելու գիտու-
թեան ու նոր տեխնիկայի տվյալները և
յոթ-մղոնանոց քայլերով առաջ շարժելու
մեր գյուղատնտեսութեան զարգացումը:

Այդ չի նշանակում, իհարկե, վոր մենք
պետք է յերեսի վրա թողնենք անհատա-
կան չքավոր-միջակային գյուղացիական
տնտեսութեանը: Վրչ, չի նշանակում: Ար-
դունաբերութեանը պարեն ու հումք մա-

տակարարելու գործում անհատական չքա-
վոր-միջակային տնտեսությունը գերա-
կշռող դեր է խաղում ու դեռ խաղալու յե
ամենամոտիկ ապագայում: Հինց այս պատ-
ճառով անհրաժեշտ է աջակցել անհատական
չքավոր-միջակային տնտեսությանը: Բայց
այս նշանակում է, վոր միմիայն անհատա-
կան գյուղացիական տնտեսությունն արդեն
բավական չէ: Այս երևույթում մեր հացա-
մթերման դժվարությունները: Այդ պատ-
ճառով չքավոր-միջակային անհատական
տնտեսությունների զարգացումը հարկավոր
է լրացնել՝ տնտեսության կոլեկտիվ ձևերն
ու խորհրդատեսություններն ամեն կերպ զար-
գացնելով: Այս պատճառով հարկավոր է կա-
մուրջ կապել անհատական չքավոր-միջակա-
յին տնտեսության և տնտեսության կոլեկտիվ
հանրային ձևերի միջև՝ մասսայական կոնսո-
լիդացիայի ձևով, մեքենա-տրակտորային
կայանների ձևով, կոոպերատիվ հասարակա-
յնությունը բոլոր միջոցներով զարգացնելու
ձևով, վորպեսզի հեշտացնենք գյուղացինե-
րի համար իրենց մանր-անհատական տնտե-

սությունը կոլեկտիվ աշխատանքի ուսերի
վրա վոխադրելը: Առանց այս պայմաննե-
րի՝ անհնարին է գյուղատնտեսության լուրջ
զարգացումը: Առանց այս պայմանների՝
անհնարին է հատիկային պլուրեթի լուծու-
մը: Առանց այս պայմանների՝ անհնարին է
գյուղացիության սակավագոր խավերի ազա-
տումը չքավորությունից, թշվառությու-
նից:

Վերջապես, այս նշանակում է, վոր հար-
կավոր է ամեն կերպ զարգացնել մեր ին-
դուստրիան, վորպես գյուղատնտեսական
արտադրությունը անելու հիմնական աղ-
բյուր, նրա վերակառուցման գծով, հարկա-
վոր է զարգացնել մետաղագործությունը,
քիմիան, մեքենաշինությունը, հարկավոր է
կառուցել տրակտորի գործարաններ, գյու-
ղատնտեսական մեքենաների գործարաններ
և այլն: Կարիք չկա ապացուցելու, վոր ան-
հնարին է զարգացնել կոլտնտեսություննե-
րը, անհնարին է զարգացնել մեքենա-տրակ-
տորային կայանները, յիթե մասսայական
կոնսոլիդացիայի միջոցով գյուղացիության

հիմնական մասսաներին տնտեսադարձան կո-
լեկտիվ ձևերին չմոտեցնենք, յեթե գյու-
ղատնտեսությանը չմատակարարենք բա-
վարար քանակությամբ տրակտորներ, գյու-
ղատնտեսական մեքենաներ և այլն: Բայց
գյուղին մեքենաներ ու տրակտորներ մա-
տակարարել անհնարին է, յեթե մեր ին-
դուստրիան ուժեղացրած տեմպով չզար-
գացնենք: Այստեղից՝ մեր ինդուստրիայի զար-
գացման արագ տեմպը՝ վորպես գյուղատն-
տեսությունը կոլեկտիվիզմի բաղադրի վրա
վերականգնելու բանալի:

Սրանք են զոգման նոր ձևերի իմաստն
ու նշանակությունը:

Ընկ. Բուխարինի խոսքը հարկադրված
է բանալոր կերպով ընդունելու զոգման
նոր ձևերի անհրաժեշտությունը: Բայց այդ
լիկ բացավոր ընդունումն է, վոր արված է
այն հաշվով, վորպեսզի զոգման նոր ձևերի
բանավոր ընդունման դրոշի տակ անցկաց-
նի ինչ-վոր ուղղակի հափաղիք մի բան:
Իրոք ընկ. Բուխարինը զոգման նոր ձևերին
դեմ է կանգնած: Ընկ. Բուխարինի մոտ յե-

լակետ հանդիսանում է վնչ թե ինդուստրիա-
յի՝ վորպես գյուղատնտեսական արտադրու-
թյան վերականգնման լծակի՝ զարգացման
արագ տեմպը, այլ անհատական գյուղացիա-
կան տնտեսության զարգացումը: Նրա մոտ
առաջին պլանի վրա յին շուկայի «նորմա-
լացումը» և դների ազատ խաղի թույլա-
տրումը գյուղատնտեսական մթերքների շու-
կայում, ըստ եյության՝ առևտրի լիակատար
ազատություն թույլատրումը: Այստեղից՝
նրա թերահավատ վերաբերմունքը դեպի
կոլտնտեսությունները, վոր արահայտվեց
Կի-ի հուլիսյան պլենումում նրա արտասա-
նած ճառում ու Կի-ի հուլիսյան պլենումի
նախորդի նրա թեղիսներում: Այստեղից՝
նրա բացասական վերաբերմունքը հացի
մթերման ժամանակ կուլակի դեմ ուղղված
արտակարգ միջոցառումների բոլոր և ամեն
տեսակի ձևերի նկատմամբ: Հայտնի յե, վոր
ընկ. Բուխարինն արտակարգ միջոցառում-
ներից այնպես է փախչում, ինչպես սատա-
նան խուճկից: Հայտնի յե, վոր ընկ. Բու-
խարինը դեռևս չի կարողանում հոսկանալ,

հիմնական մատասներին տնտեսավարման կո-
լեկտիվ ձևերին չմոտեցնենք, յեթե գյու-
ղատնտեսությանը չմատակարարենք բա-
վարար քանակությամբ տրակտորներ, գյու-
ղատնտեսական մեքենաներ և այլն: Բայց
գյուղին մեքենաներ ու տրակտորներ մա-
տակարարել անհնարին ե, յեթե մեր ին-
դուստրիան ուժեղացրած տեմպով չզար-
գացնենք: Այստեղից՝ մեր ինդուստրիայի զար-
գացման արագ տեմպը՝ վորպես գյուղատն-
տեսությունը կոլեկտիվիզմի բաղայի վրա
վերակառուցելու բանալի:

Սրանք են զոգման նոր ձևերի իմաստն
ու նշանակությունը:

Ընկ. Բուխարինի խոսքը հարկադրված
և բանավոր կերպով ընդունելու զոգման
նոր ձևերի անհրաժեշտությունը: Բայց այդ
լիկ բանավոր ընդունումն ե, վսր արված ե
այն հաշվով, վորպեսզի զոգման նոր ձևերի
բանավոր ընդունման դրոշի տակ անցկաց-
նի ինչ-վոր ուղղակի հակադիք մի բան:
Իրոք ընկ. Բուխարինը զոգման նոր ձևերին
դեմ ե կանգնած: Ընկ. Բուխարինի մոտ յե-

լակետ հանդիսանում ե վնչ թե ինդուստրիա-
յի՝ վորպես գյուղատնտեսական արտադրու-
թյան վերակառուցման լծակի՝ զարգացման
արագ տեմպը, այլ անհատական գյուղացիա-
կան տնտեսության զարգացումը: Նրա մոտ
առաջին պլանի վրա յին շուկայի «նորմա-
լացումը» և դների ազատ լսադի թուլյա-
տրումը գյուղատնտեսական մթերքների շու-
կայում, ըստ եյության՝ առետրի լիակատար
ազատության թուլյատրումը: Այստեղից՝
նրա թերահավատ վերաբերմունքը դեպի
կոլտնտեսությունները, վոր արտահայտվեց
Կի-ի հուլիսյան պլենումում նրա արտասա-
նած ձառում ու Կի-ի հուլիսյան պլենումի
նախորդի նրա թեղիսներում: Այստեղից՝
նրա բացասական վերաբերմունքը հացի
մթերման ժամանակ կուլակի դեմ ուղղված
արտակարգ միջոցառումների բոլոր և ամեն
տեսակի ձևերի նկատմամբ: Հայտնի յե, վոր
ընկ. Բուխարինն արտակարգ միջոցառում-
ներից այնպես ե փախչում, ինչպես սատա-
նան խուճնից: Հայտնի յե, վոր ընկ. Բու-
խարինը դեռևս չի կարողանում հասկանալ,

վոր աշխատանքներում կուլակը հո-
ժարակամ, ինքնահոսի կարգով բավարար-
քանակով հաց չի հանձնի: Սա աշխատա-
ցուցված և մեր միջերման աշխատանքի յեր-
կամյա փորձով:

Լավ, իսկ ի՞նչպես անենք, յեթե ապ-
րանքային հացն այնուամենայնիվ չբավա-
կանանա: Բուխարինը սրան պատասխանում
և. արտակարգ միջոցառումներով մի ան-
հանգստացրեք կուլակին ու արտասահմանից
հաց ներմուծեցեք: Նա դեռևս մոտ անցյալում
առաջարկում էր արտասահմանից ներմուծել
մի 50 միլիոն փուլթ, այսինքն վալյուտայով
մի 100 միլիոն ռուբլու հաց: Իսկ յեթե վա-
լյուտան հարկավոր է նրա համար, վոր ին-
դուստրիայի համար սարքավորում ներմու-
ծենք: Բուխարինը սրան պատասխանում և.
նախապատվություն պետք է տալ ար-
տասահմանից հաց ներմուծելուն, ալ ներեա-
բար հետին պլանի վրա թողնելով արդյու-
նաբերության համար սարքավորում ներ-
մուծելը:

Այսպիսով դուք և գալիս, վոր հատիկի

պորըլիմի լուծման և դյուդատնտեսության
վերակառուցման հիմք է հանդիսանում վնչ-
թե ինդուստրիայի դարգացման արագ տեմ-
պը, այլ ազատ շուկայի ու նրանում գների
ազատ խաղի բաղայի վրա անհատական
գյուղացիական տնտեսությունը զարգացնե-
լը՝ դրա մեջ ներառած նաև կուլակային
տնտեսությունը:

Այսպիսով մենք գործ ունենք տնտեսա-
կան քաղաքականության յերկու տարբեր
պլանների հետ:

Կուսակցության պլանը.

1. Մենք վերադինում ենք (վերակա-
ռուցումը) արդյունաբերությունը:

2. Մենք սկսում ենք ըրջորեն վերադինել
գյուղատնտեսությունը (վերակառուցումը):

3. Դրա համար հարկավոր է ընդլայնել
կոլտնտեսությունների ու խորհրտնտեսու-
թյունների կառուցումը, մասսայորեն կիրա-
ռել կոնսոլիդացիան ու մեքենա-արակտորա-
յին կայանները, վորպես ինդուստրիայի ու
գյուղատնտեսության միջև առաջգրգան
գործում հաստատելու միջոց:

4. Ինչ վերաբերում է հացամթերման դժվարություններին տվյալ մոմենտում, ապա անհրաժեշտ է ընդունել միջակ-չքաղութական մասսաների հասարակական աջակցութեամբ ամրապնդված ժամանակավոր արտակարգ միջոցառումների թույլատրելիությունը վորպես կուլակութան դիմադրությունը կոտրելու և նրանից հացի ավելացուցնելն առավելագույն չափով վերցնելու միջոցներից մեկը, ավելցուկներ, վորոնք անհրաժեշտ են նրա համար, վոր յուր գնանք առանց հաց ներմուծելու ու վալյուտան պահպանենք ինդուստրիայի զարգացման համար:

5. Անհատական չքավոր-միջակային տընտեսությունը գերակշռող դեր է խաղում և դիռեա խաղալու յե յերկրին պարեն ու հումք մատակարարելու գործում, բայց մի-միայն նա արդեն բավական չէ,—այս պատճառով անհատական չքավոր-միջակային տնտեսության զարգացումը հարկավոր է լրացնել կոլտնտեսությունների ու խորհրդատեսությունների զարգացմամբ, մասսայա-

կան կոնսրակտացիայով, մեքենատրակտորային կայանների ուժեղացրած զարգացմամբ նրա համար, վոր հեշտացնենք կապիտալիստական տարրերի արտադրումը գյուղատնտեսությունից և անհատական գյուղացիական տնտեսությունների աստիճանական փոխադրումը խոշոր կոլեկտիվ տնտեսությունների ռեկրսի վրա, կոլեկտիվ աշխատանքի ռեկսերի վրա:

6. Բայց այս ամենը ձեռք բերելու համար անհրաժեշտ է ամենից առաջ ուժեղացնել ինդուստրիայի, մետաղի, քիմիայի, մեքենաշինության, տրակտորային գործարանների, գյուղատնտեսական մեքենաների գործարանների և այլնի զարգացումը: Առանց դրան անհնարին է լուծել հատիկային պրոբլեմն ու գյուղատնտեսության վերակառուցումը:

Հետևություն.— գյուղացեցեցության վերակառուցման բանալին մեք ինդուստրիայի զարգացման արագ քննալն է:

Ընկ. Բուխարինի պլանը.

1. Շուկայի «նորմալացում», դների ազատ խաղի թույլատրում շուկայում ու հացի

գնեցի բարձրացում, առանց կանգ առնելու
այն բանի առաջ, վոր դա կարող է տանել
դեպի արդույնաբերական ասլրանքների, հում-
քի, հացի թանգացում:

2. Գյուղացիական անհատական տնտե-
սության զարգացումն ամեն կերպ՝ վորոշ
չափով իջեցնելով կոլտնտեսությունների ու
խորհանտեսությունների զարգացման տեմպը
(ընկ. Բուխարինի հուլիսյան թեղիսները,
Բուխարինի ճառը հուլիսյան պլենումում):

3. Մթերումներ ինքնահոսի միջոցով,
վորոնք միշտ ու բոլոր տեսակի պայման-
ներում բացառում են կուլակության դեմ
արտակարգ միջոցառումների նույնիսկ մաս-
նակի կիրառումը, յեթե այդ միջոցառում-
ները մինչև անգամ պաշտպանություն են
գտնում միջակ-չքաղվորական մասսայի կող-
մից:

4. Հացը չբավականացնելու դեպքում—
մոտ 100 միլիոն ռուբլու հացի ներմուծում:

5. Իսկ յեթե վալյուտան չբավականաց-
նի այն բանին, վորպեսզի ծածկենք թե
հացի ներմուծումը, թե արդյունաբերության

համար սարքավորման ներմուծումը, ապա
հարկավոր է կրճատել սարքավորման ներ-
մուծումը, ուրեմն նաև մեր ինդուստրիայի
զարգացման տեմպը, — ալյապես մեղանում
կլինի գյուղատնտեսության «դոփգոփում
կանդնած տեղում» («топтанье на месте»),
կամ հենց «ուղղակի ցած գլորում»¹:

Հետևություն.— գյուղացեստության վերա-
կառուցման բանալին անհատական գյուղա-
ցիական ցեսեստության զարգացումն է:

Ահա թե բանն ի՞նչ կերպարանք է ընդու-
նում, ընկերներ:

Ընկ. Բուխարինի պլանն ինդուստրիայի
զարգացման տեմպի իջեցման ու զոդման
նոր ձևերի խաբխլման պլանն է:

Սրանք են մեր տարաձայնությունները:

Արդյոք մենք չէ՞նք ուշացել զոդման նոր
ձևերի զարգացման գործում, կոլտնտեսու-
թյունների, խորհանտեսությունների և այլնի
զարգացման գործում:

¹ Ն. Բուխարին, Տնտեսագետի նոթեր

Կան մարդիկ, վորոնք պնդում են, թե կուսակցությունը գոնե մի-յերկու տարով ուշացել է այս գործում: Սա ճիշտ չէ, ընկերներ: Սա միանգամայն սխալ է: Այսպես կարող են խոսել միայն «ձախ» աղմկաբաշները, վորոնք պատկերացում չունեն ՍՍՀՄ-ի եկոնոմիկայի մասին: Ի՞նչ է նշանակում ուշանալ այս գործում: Յեթե խոսքն այն մասին է, վորպեսզի նախատեսենք կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների անհրաժեշտությունը, ապա այդ գործը մենք սկսել ենք դեռևս Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ: Վոր կուսակցությունը նախատեսել էր կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների անհրաժեշտությունը դեռևս այն ժամանակ, Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակաշրջանում, — այդ մասին վոչ մի կասկած չի կարող լինել: Վերջապես, կարելի չէ վերցնել մեր ծրագիրը, վոր ընդունվել է կուսակցության VII համագումարում (1919 թ. մարտ): Կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների անհրաժեշտությունն այնտեղ հաշվի չի առնված ամենայն

պարզությամբ: Բայց կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների անհրաժեշտության միմիայն նախատեսումը մեր կուսակցության ղեկավար վերնախավի կողմից բավական չէ այն բանի համար, վորպեսզի կենսագործենք ու կազմակերպենք մասնաշաղկան ռաբժում հոգուտ կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների: Հետևապես խոսքը վերաբերում է վոչ թե նախատեսմանը, այլ կոլտնտեսային-խորհտնտեսային շինարարության պլանի իրականացմանը: Բայց այդպիսի պլանի իրականացման համար մի ավելի շարք պայմաններ են պահանջվում, վոր մենք մինչև այժմ չունեյինք և վորոնք միայն վերջին ժամանակները յերևան յիկան: Ահա թե բանն ինչուն է, ընկերներ:

Վորպեսզի իրագործենք կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների համար մասնաշաղկան շարժում առաջ բերելու պլանը, դրա համար անհրաժեշտ է ամենից առաջ, վոր այս գործում կուսակցական վերնախավին աջակցի ամենից առաջ կուսակցությունը

մասսայաբար: Իսկ մեզանում, ինչպես հայտնի
յե, կուսակցությունը միլիոնանոց եւ Հետեա-
բար, հարկավոր եր լայն կուսակցական մաս-
սաներին համոզել, Վոր ճիշտ ե ղեկավար
վերնախավի քաղաքականությունը: Այս՝
առաջին:

Այնուհետեւ, դրա համար անհրաժեշտ ե,
վոր գյուղացիութեան ընդերքում ստեղծվի
մասսայական շարժում հոգւտ կոլտնտեսու-
թյունների, վորպեսզի գյուղացիությունը վնչ
թե վախենա կոլտնտեսություններից, այլ
ինքը մտնի կոլտնտեսությունները՝ փորձով
համոզվելով, վոր կոլտնտեսություններն ա-
ռավելություն ունեն անհատական տնտե-
սութեան հանդեպ: Իսկ սա լուրջ գործ ե,
վորը վորոշ ժամանակ ե պահանջում: Այս՝
յերկրորդ:

Այնուհետեւ, սրա համար անհրաժեշտ ե,
վոր պետութեան ունենա նյութական մի-
ջոցներ, վորոնք անհրաժեշտ են շարժումը
ֆինանսավորելու համար, կոլտնտեսություն-
ներն ու խորհրտնտեսությունները ֆինան-
սավորելու համար: Իսկ այս գործի համար,

թանգազին ընկերներ, հարկավոր են հա-
րուրավոր ու հարյուրավոր միլիոններ: Այս՝
յերրորդ:

Վերջապես, սրա համար անհրաժեշտ ե,
վոր ինդուստրիան քիչ թե շատ բավարար
չափով զարգացած լինի, վոր անհրաժեշտ ե
գյուղատնտեսութեանը մեքենաներ, տրակ-
տորներ, պարարտանյութեր ե այլն մատա-
կարարելու համար: Այս՝ չորրորդ:

Կարելի՞ յե արդոք պնդել, թե մեզանում
մի-յերկու կամ յերեք տարի սրանից առաջ
այս բոլոր պայմաններն արդեն կային: Վնչ,
այդ չի կարելի պնդել:

Զի կարելի մոռանալ, վոր մինք կառա-
վարող ե վնչ թե ոպովիցիոն կուսակցություն
ենք ներկայացնում: Ոպովիցիոն կուսակ-
ցությունը կարող ե լողունգներ տալ,—
յես խոսում եմ շարժման արմատական գործ-
նական լողունգների մասին,—այն հաշվով,
վոր նա դրանք իրականացնի իր՝ իշխա-
նութեան գլուխ անցնելուց հետո: Վոչ վոք
չի կարող ոպովիցիոն կուսակցութեանը մե-
ղադրել այն բանում, վոր նա իր արմատա-

կան լողունդներն անհապաղ չի խափանացնում, վորովհետև բոլորն ել հասկանում են, վոր դեկի մոտ կանգնած ե վոչ թե նա, ու պողիցիոն կուսակցութունը, այլ ուրիշ կուսակցութուններ: Միանգամայն այլ ե կառավարող կուսակցության բանը, վորպիսին մեր բոլորիկյան կուսակցութունն ե: Այդպիսի կուսակցության լողունդները վոչ թե հասարակ (ազիտացիոն) լողունդներ են, այլ մի շատ ազեկի մեծ բան, վորովհետև նրանք ունեն գործնական վնտի ուժ, որեմքի ուժ, վոր հարկավոր ե հենց այժմ կիրառել: Մեր կուսակցութունը չի կարող գործնական լողունդ տալ ու հետո հետաձգել նրա կենսագործումը: Դա մասսաներին խաբել կլինի: Լողունդ տալու, մանավանդ այնպիսի լուրջ լողունդ տալու համար, ինչպիսին գյուղացիության միլիոնավոր մասսաներին կոլեկտիվիզմի ռեալիզմի վրա փոխադրելն ե, հարկավոր ե ունենալ նրանց ուղղակի իրականացման պայմաններ, հարկավոր ե, վերջապես, ստեղծել, կազմակերպել այդ պայմանները: Ահա թե ինչու մեզ համար բու-

վական չի կոտնտեսութունների ու խորհրդատեսութունների անհրաժեշտության սոսկ նախատեսումը կուսակցական վերնախավի կողմից: Ահա թե ինչու մեզ հարկավոր են պայմաններ, վորոնք անհրաժեշտ են, վորպեսզի իրականացնեմք, կենսագործեմք մեր լողունդները:

Արդյոք մեր կուսակցութունը մասսայաբար պատրմատ եր կոտնտեսութուններն ու խորհրդատեսութուններն ամեն կերպ զարգացնելուն, ասենք, մի-յերկու կամ յերեք տարի առաջ: Վոչ, նա դեռևս դրան պատրաստ չեր: Կուսակցական մասսաներում լուրջ շրջադարձը դեպի զոդման նոր ձևերի կողմն սկսվեց միայն հացամթերումների առաջին լուրջ դժվարութուններից: Այդ դժվարութունները հարկավոր յեկան այն բանի համար, վոր կուսակցութունը մասսայաբար զգա զոդման նոր ձևերի, և, ամենից առաջ, կոտնտեսութունների ու խորհրդատեսութունների արագացման ամբողջ անհրաժեշտութունը և վճարար աջակցի այդ գործում իր Կենտկոմին: Ահա ձեզ մի

սլաշման, վոր առաջ մենք չունեյինք, և վորն այժմ առկա յե:

Արդյոք մի-յերկու կամ յերեք տարի սրանից առաջ մեզանում կմը գյուղացիութեան միլիոնավոր մասսաների լուրջ շարժում կոլտնտեսութեաններէ կամ խորհտընտեսութեաններէ ոգտին: Վճշ, չկար: Ամեն մեկին հայտնի յե, վոր յերկու կամ յերեք տարի առաջ գյուղացիութեանը թշնամաբար եր վերաբերվում խորհտնտեսութեաններին, իսկ կոլտնտեսութեանները նա քամահրում եր վորպես վոչ մի բանի պետք չեկող «կոմունիստ»: Իսկ միջոց: Այժմ բանն ուրիշ ե: Այժմ մեզանում արդեն կան գյուղացիութեան ամբողջ խավեր, վորոնք խորհտնտեսութեաններէ ու կոլտնտեսութեաններէ վրա նայում են վորպես գյուղացիական տնտեսութեանը սերմացուցով, ազնվացրած անասուններով, մեքենաներով, տրակտորներով ոգնելու աղբջուրի վրա: Այժմ վորքան կարող ես մեքենաներ ու տրակտորներ տուր միայն, կոլտնտեսութեաններէ գործն ուժեղացրած տնտեսով առաջ կգնաս:

Վերտեղից ծագեց այդ բեկումը գյուղացիութեան վորոշ, բավական նշանակելի խավերի մեջ: Ի՞նչն եր նպաստում դրան: Ամենից առաջ կոոպերացիայի և կոոպերատիվ հասարակայնութեան զարգացումը: Կասկած չի կարող լինել, վոր առանց կոոպերացիայի, մանավանդ գյուղացիների մեջ կոլտնտեսութեաններէ ոգտին հոգեբանական բազա ստեղծած գյուղատնտեսական կոոպերացիայի հզոր զարգացման՝ մեղանում չեր կարող լինել այն ձգանքը դեպի կոլտնտեսութեանները, վոր ցուցաբերում են այժմ գյուղացիութեան ամբողջ խավեր: Այստեղ մեծ դեր խաղաց նաեւ լավ կազմակերպված կոլտնտեսութեանների առկայութեանը, վորոնք գյուղացիներին լավ որինակներ տվին այն բանի, թե ինչպես կարելի յե բարեկամել գյուղատնտեսութեանը՝ մանր-գյուղացիական տնտեսութեանները խոշոր, կոլեկտիվ տնտեսութեաններէ մեջ միավորելով: Այստեղ իր դերը խաղաց նաեւ բարեկարգ խորհտնտեսութեանների առկայութեանը, վորոնք ոգնում եյին գյուղացի-

ներին տնտեսութեան բարեկաման գործում։
Ել յես չեմ խոսում մյուս փաստերի մասին,
վորոնք ձեզ բոլորիդ լավ հայտնի յեն։ Ահա-
վասիկ ձեզ ելի մի պայման, վոր մենք ա-
ռաջ չունեցինք և վորը մենք այժմ ունենք։
Այնուհետե, կարելի՞ յի արդյոք պնդել,
թե մի-յերկու կամ յերեք տարի առաջ մենք
հնարավորութուն ունեցինք լրջորեն ֆի-
նանսավորելու կոլտնտեսութեաններին ու
խորհրտնտեսութեաններին՝ այդ գործի հա-
մար բաց թողնելով հարյուրավոր միլիոն
ռուբլիներ։ Վնչ, չի կարելի պնդել։ Դուք
լավ գիտեք, վոր մեզանում միջոցներ պա-
կասում եյին նույնիսկ արդյունաբերութեան
այն նվազագույնի զարգացման համար, ա-
ռանց վորի ընդհանրապես հնարավոր չի
վոչ մի ինդուստրացում, ել չեմ խոսում
գյուղատնտեսութեան վերակառուցման մա-
սին։ Կարճ կայինք արդյոք մենք այդ մի-
ջոցները խլել արդյունաբերութեանից, վորը
յերկրի ինդուստրացման բազան ե, ու
զրանք հանձնել կոլտնտեսութեաններին և
խորհրտնտեսութեաններին։ Պարզ ե, վոր

չեցինք կարող։ Լավ, իսկ ասի՛մ։ Այժմ մենք
միջոցներ ունենք կոլտնտեսութեանների ու
խորհրտնտեսութեանների զարգացման հա-
մար։

Վերջապես, կարելի՞ յի արդյոք պնդել,
թե մի-յերկու կամ յերեք տարի առաջ ին-
դուստրիայի մեջ մենք բավարար բազա ար-
դեն ունեցինք՝ գյուղատնտեսութեանն ու ժե-
ղացրած թափով մեքենաներ, տրակտորներ
և այլն մատակարարելու համար։ Վնչ, այդ
չի կարելի պնդել։ Այն ժամանակ խնդիրն
այն եր, վոր ստեղծենք նվազագույն ին-
դուստրիալ բազա՝ գյուղատնտեսութեանն
ապագայում մեքենաներ ու տրակտորներ
մատակարարելու համար։ Մեզանում այն
ժամանակ հենց այդ բազայի ստեղծման
վրա ել ծախսվեցին մեր ֆինանսական սուղ
միջոցները։ Լավ, իսկ ասի՛մ։ Այժմ մենք
ունենք այդ ինդուստրիալ բազան գյուղա-
տնտեսութեան համար։ Համենայն դեպս նա,
հենց այդ բազան, մեզանում ստեղծվում ե
արագացրած տեմպով։

Դուրս ե գալիս, վոր կոլտնտեսութեան-

ներին տնտեսութեան բարեկաման գործում: Եւ յետ չեմ խոստում մյուս փաստերի մասին, վորոնք ձեզ բոլորիդ լալ հայտնի յեն: Ահա-վասիկ ձեզ ելի մի պայման, վոր մենք առաջ չունեյինք և վորը մենք այժմ ունենք:

Այնուհետեւ, կարելի՞ յի արդյոք պնդել, թե մի-յերկու կամ յերեք տարի առաջ մենք հնարավորութեան ունեյինք լրջորեն ֆինանսավորելու կոլտնտեսութեաններին ու խորհանտեսութեաններին՝ այդ գործի համար բաց թողնելով հարյուրավոր միլիոն ուրլիններ: Վո՛չ, չի կարելի պնդել: Դուք լալ գիտեք, վոր մեզանում միջոցներ պահապանում եյին նույնիսկ արդյունաբերութեան այն նվազագույնի զարգացման համար, առանց վորի ընդհանրապէս հնարավոր չե վո՛չ մի ինդուստրացում, եւ չեմ խոստում գյուղատնտեսութեան վերակառուցման մասին: Կարճիկ եյինք արդյոք մենք այդ միջոցները խիլ արդյունաբերութեանից, վորը յերկրի ինդուստրացման բազան ե, ու դրանք հանձնել կոլտնտեսութեաններին և խորհանտեսութեաններին: Պարզ ե, վոր

չեյինք կարող: Լալ, իսկ ա՛յժմ: Այժմ մենք միջոցներ ունենք կոլտնտեսութեանների ու խորհանտեսութեանների զարգացման համար:

Վերջապէս, կարելի՞ յի արդյոք պնդել, թե մի-յերկու կամ յերեք տարի առաջ ինդուստրիայի մեջ մենք բաւարար բազա արդեն ունեյինք՝ գյուղատնտեսութեանն ուժեղացրած թափով մեքենաներ, տրակտորներ և այլն մատակարարելու համար: Վո՛չ, այդ չի կարելի պնդել: Այն ժամանակ խնդիրն այն եր, վոր ստեղծենք նվազագույն ինդուստրիալ բազա՝ գյուղատնտեսութեանն ապագայում մեքենաներ ու տրակտորներ մատակարարելու համար: Մեզանում այն ժամանակ հենց այդ բազայի ստեղծման վրա եւ ծախսվեցին մեր ֆինանսական սուղ միջոցները: Լալ, իսկ ա՛յժմ: Այժմ մենք ունենք այդ ինդուստրիալ բազան գյուղատնտեսութեան համար: Համենայն դեպս նա, հենց այդ բազան, մեզանում ստեղծվում ե արագացրած տեմպով:

Դուքս ե գալիս, վոր կոլտնտեսութեան-

ների ու խորհանտեսությունների մասսայական զարգացման համար անհրաժեշտ պայմանները մեղանդում միայն վերջին ժամանակներն ստեղծվեցին:

Ահա թե բանն ինչ դրուժյան մեջ է, ընկերներ:

Ահա թե ինչու էի կարելի ասել, թե զոգման նոր ձևեր զարգացնելու գործում մենք ուշացել ենք:

դ) ԸՆԿ. ԲՈՒԽԱՐԻՆԸ ՎՈՐՊԵՍ ԹԵՈՐԵՏԻԿ

Հիմնականում սրանք են աջ ռադիցիալի թեորետիկի—ընկ. Բուխարինի—գլխավոր սխալները մեր քաղաքականության հիմնական հարցերում:

Ատում են, թե ընկ. Բուխարինը մեր կուսակցության թեորետիկն է: Նա, իհարկե, թեորետիկ է, ու փոքր թեորետիկ է: Բայց բանն այն է, վոր թեորիայի գործը նրա մոտ վոչ-բոլորովին բարեհաջող վիճակում է: Այս յերևում է թեկուզ հենց այն բանից, վոր կուսակցական քաղաքականու-

թյան հարցերում նա սխալների մի ամբողջ կուլտ է դիզել,—սխալներ, վոր յես հենց նոր բնորոշեցի: Չի կարող պատահել, վոր այդ սխալները,—սխալներ կոմիստերնի գծով, սխալներ դասակարգային կռիվի հարցերի վերաբերյալ դասակարգային կռիվի սրման, գյուղացիության, նեպի, զոգման նոր ձևերի վերաբերյալ սխալներ,—էի կարող պատահել վոր բոլոր այս սխալները նրա մոտ պատահաբար յերևան յեկած լինեն: Վհչ, այդ սխալները պատահական չեն: Նրանք, ընկ. Բուխարինի այդ սխալները, առաջացել են նրա անճիշտ դերքաները, վորումից, նրա թեորիական թեորություններից: Այո, ընկ. Բուխարինը—թեորետիկ է, բայց նա վոչ-լիովին մարքսիստական թեորետիկ է. նա մի թեորետիկ է, վորը դեռ պետք է ելի սովորի, վորպեսզի միանպաստման մարքսիստական թեորետիկ դառնա:

Վկայակոչում են ընկ. Լենինի հայտնի նամակը Բուխարինի մասին վորպես թեորետիկի: Յեկեք կարդանք այդ նամակը:

«Կի-ի յերկաթասարդ անդամներից,—ասում է Լե-
նինը,—ուզում եմ միջանի խոսք ասել Բուխարինի
ու Պյատակովի մասին: Դրանք, ըստ իս, ամենից
աչքի ընկնող ուժերն են (ամենայնիպասարդ ուժե-
րից), և նրանց վերաբերմամբ հարկավոր է, վոր
նկատի ունենանք հետեյալը. Բուխարինը կուսակցու-
թյան վնչ միայն ամենից արժեքավոր ու ամենից
խոշորագույն թեորեաթիկն է, նա նույնպես որինա-
կան կերպով ամբողջ կուսակցության սիրելին է հա-
մարվում, բայց նա քեորիական հայացքները սուս մեծ
սարակուսանքով կարող են դառնալ յիտլին մարքսիս-
ականների կարգը, վորովհետեւ նա մեջ ինչ-վոր սխա-
լասիկական բան կա (նա յերբեք չի սովորել յեւ,
կարծում եմ, յերբեք յիտլին չի հասկացել դիալեկտի-
կան)»¹:

Այսպէս, թեորեաթիկ առանց դիալեկտի-
կայի: Թեորեաթիկ-սխալաստիկ: Թեորեաթիկ,
վորի «թեորիական հայացքները շատ մեծ
տարակուսանքով կարող են դասվել լիովին
մարքսիստականներէ կարգը»: Այս է ընկ.
Բուխարինի թեորիական դեմքի այն ընդ-
թագիրը, վոր տվել է Լենինը:

¹ 1926 թվի հուլիսյան պլենումի սղագրություն,
պրակ IV, էջ 66: Ընդգծումն իմն եւ Ի. Սս.:

Դուք ինքներդ հասկանում եք, ընկեր-
ներ, վոր այսպիսի թեորեաթիկն ելի սովոր-
ել է պետք: Յեւ յեթե ընկ. Բուխարինը
հասկանար, վոր ինքը գեռես լիովին աշար-
տուն թեորեաթիկ չէ, վոր ինքը կարելի ունի
ելի սովորելու, վոր ինքը մի թեորեաթիկ է,
վորը գեռես վոչ-լիովին է յուրացրիլ դիա-
լեկտիկան,—իսկ դիալեկտիկան մարքսիզմի
հոգին է,—յեթե նա այս բանը հասկանար,
ապա նա աշելի համեստ կլիներ, և կու-
սակցությունը դրանից միայն կշահեր: Բայց
դժբախտությունն այն է, վոր Բուխարինը
համեստությամբ չի տառապում: Դժբախ-
տությունն այն է, վոր նա վնչ միայն հա-
մեստությամբ չի տառապում, այլ և հանձն
է առնում նույնիսկ ուսուցանելու մեր ու-
սուցիչ Լենինին մի ամբողջ շարք հարցե-
րում, և ամենից առաջ պետության վերա-
բերյալ հարցում: Սհա թե վնչն է դժբախ-
տությունը, ընկերներ:

Թույլ տվեք այս առթիւ վկայակոչելու
Լենինի ու Բուխարինի միջև յեղած հայտնի
թեորիական վեճը պետության հարցի վե-

բարեբրամբ, վոր տեղի յի ունեցել 1916 թվականին: Սա կարևոր ե մեզ համար, վոր պեսզի բացահայտենք ինչպես Լինինին սո- վորեցնելու պատրաստվող ընկ. Բուխարին նի անշափ հավակնությունները, այնպես ել նրա թեոքիական թուլությունները ար- մատենեն այնպեսի կարևոր հարցերում, ինչպես պրոլետարիատի դիկտատուրայի հարցն ե, դասակարգային կռվի հարցը ե այլն: Ինչպես հայտնի յի, «Յերիտասարդու- թյան ինտերնացիոնալ» ժուռնալում 1916 թվին լույս տեսավ ընկ. Բուխարինի հոդ- վածը Nota Bene ստորագրությամբ, վորը, ըստ բանի եյության, ուղղված ե ընկ. Լի- նինի դեմ: Այդ հոդվածում ընկ. Բուխարինը գրում ե.

«... Միանգամայն սխալ ե սոցիալիստները ու անարխիստները միջև յեղած տարբերությունները վորոնեյ այն բանում, թե տաաջինները պետության կողմնակիցներ են, յերկրորդները՝ հակառակորդներ: Տարբերություն իրոք այն ե, վոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան ցանկանում ե կազմակերպել հասարակական նոր արտադրությունը վորպես կենտ- րոնացված, այսինքն՝ տեխնիկական ամենից ավելի

առաջադիմական արտադրություն, այսինչ ապա- կենտրոնացված անարխիկ արտադրությունը կնշա- նակել լոկ մի քայլ դեպի հեռ՝ դեպի հին տեխնիկան, դեպի ձեռնարկության հին ձևը ... »:

«... Սոցիալ-դեմոկրատիայի համար, վորը մաս- սաները դաստիարակն ե կամ գոնե պետք ե լինի, այժմ ավելի, քան յերեկ, անհրաժեշտ ե ընդգծել իր սկզբունքային թշնամությունը դեպի պետությու- նը ... Այժմյան պատերազմը ցույց տվեց, թե պե- տականության արմատները վորքան խորն են թա- վանցել բանվորների հոգիները մեջ»:

Ընկ. Բուխարինի այս հայացքները քննադատելով՝ Լինինը պատասխանում ե մի հատուկ հոդվածով, վոր հրապարակված ե 1916 թվականին.

«Այդ ճիշտ չե: Հեղինակը հարց ե դնում այն մասին, թե սոցիալիստները վերաբերմունքը դեպի պետությունը ինչով ե տարբերվում անարխիստների վերաբերմունքից, բայց պատասխանում ե վնչ թե այդ, այլ ուրիշ հարցի, թե ինչ տարբերությամբ կա նրանց վերաբերմունքի մեջ դեպի ապագա հասարա- կության տնտեսական հիմունքը: Այդ, իհարկե, շատ կարևոր ու անհրաժեշտ հարց ե: Բայց այդտեղից չի բղխում, թե կարելի յեր մոռանալ գլխավորն այն տարբերության մեջ, վոր գոյություն ունի սոցիա-

լիստոները ու անարխիստները դեպի պետությունն ունեցած վերաբերմունքում: Սոցիալիստները կողմնակից են արդի պետության ու նրա հաստատությունների ռադիկալիզմին: Պաշտպանում են արդի պետության համար մղվող պայքարում, այլև հավասարակշռության նրանք կողմնակից են կապիտալիզմից դեպի սոցիալիզմ կատարվող անցման յուրօրինակ ձևի համար պետությունն ուղղադրժեղու անհրաժեշտությունը: Անցման այդպիսի ձև, նույնպես պետություն, հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրան: Անարխիստներն ուղղում են «վերացնել» պետությունը, «պայթեցնել» (sprengen) այն, ինչպես մի տեղ արտահայտվում է ընկ. Nota Bene-ն, այս հայացքը սխալաբար վերագրելով սոցիալիստներին: Սոցիալիստները—հեղինակը ցավով արտի խիստ անլրիվ է մեջ բերել սրան վերաբերող՝ Ենդելսի խոսքերը—ընդունում են պետության մահացումը, «աստիճանական» «նիւթումը» բուրժուազիային երսպրոպրիա-ցիայի յենթարկելուց հետո» . . .

«Ինչպի պետությունը յեղած «սկզբունքային թըշնամություն» «ընդգծելու» համար հարկավոր է իսկապես «պարզ» ըմբռնել այն, իսկ հեղինակի մոտ հենց պարզություն չկա: Իսկ «պետականության արմատներին» վերաբերող ֆրազն արդեն բոլորովին խճճված ֆրազ է, վոչ-մարքսիստական և վոչ-սոցիալիստական ֆրազ է: Վրչ թե պետականությունն» է ընդհարվել պետականության ժխտման հետ, այլ ուղղորտունիս-

տական քաղաքականությունն է (այսինքն՝ ուղղորտունիստական, ռեֆորմիստական, բուրժուական վերաբերմունքը դեպի պետությունը) ընդհարվել հեղափոխական սոցիալ-դեմոկրատական քաղաքականության հետ (այսինքն՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատական վերաբերմունքի հետ դեպի բուրժուական պետությունը և դեպի պետության ուղղադրժեղ բուրժուազիային դեմ՝ սրան տապալելու համար): Սրանք բոլորովին, բոլորովին տարբեր բաներ են»¹:

Թվում է, թե պարզ է, թե այստեղ բանն ինչու է, և թե ընկ. Բուխարինն ինչ կիսաանարխիստական ցեխաջուր է ընկել:

Սեմ: Լենինն այն ժամանակ դեռևս ծավալուն կերպով չէր ձևակերպել պետության «պայթեցման» անհրաժեշտությունը: Բուխարինը, անարխիստական սխալներ գործելով, մոտենում էր այդ հարցի ձևակերպմանը:

Սեմ: Վրչ, ընկ. Ստեն, այժմ խոսքն

¹ Լենին, հ. XIX, էջ 296, «Յերիտասարդության ինտերնացիոնալ» («Интернационал молодежи»):

այդ մասին չե, խոսքն այն մասին ե, թե ընդհանրապես ինչ վերաբերմունք ե ցույց տրվում պետությունը, խոսքն այն մասին ե, վոր, Բուխարինի կարծիքով, բան-վոր դասակարգը պետք ե սկզբունքներն թըշ-նամի լինի ամեն մի պետություն, այդ թվում նաև բանվոր դասակարգի պետությունը:

Սեեն: Լենինն այն ժամանակ խոսում եր միայն պետություն ոգտադործման մասին, ընկ. Բուխարինին քննադատելիս վոչինչ չխոսելով «պայթեցման» մասին:

Սեալին: Սխալվում եք, ընկ. Ստեն: Հա-մարձակվում եմ հավաստիացնել ձեզ, վոր այստեղ խոսքն այն մասին ե, վոր բանվոր-ները պետք ե ընդգծեն, Բուխարինի (և անարխիստները) կարծիքով, իրենց սկզբ-բունքային թշնամությունը դեպի ամեն մի պետություն, հետևաբար նաև դեպի անց-ման ժամանակաշրջանի պետությունը, դե-պի բանվոր դասակարգի պետությունը: Ապա մեկ փորձեցեք հասկացնել մեր բան-վորներին, վոր բանվոր դասակարգը սկզբ-բունքային թշնամությունը պետք ե տողոր-

վի դեպի պրոլետարական դիկտատուրան, վորը չէ վոր նույնպես պետություն ե: Բուխարինի դիրքը, վոր շարադրված ե «Յերիտասարդության ինտերնացիոնալ»-ում զետեղված նրա հոդվածում, պետության ժխտման դիրք ե մի ժամանակաշրջանում, վորն անցման ժամանակաշրջան ե կապի-տալիզմից դեպի սոցիալիզմ: Ընկ. Բուխարինի տեսողությունից այստեղ վերսկզբ ե մի «ման-րունք», այն ե՝ նրա տեսողությունից վերսկզբ ե մի ամբողջ անցման ժամանակաշրջան, յերբ բանվոր դասակարգը չի կարող յուր գնալ առանց իր սեփական պետություն, յեթե նա իսկապես ուզում ե ճնշել բուրժուազիա-յին ու սոցիալիզմ կառուցել: Այս՝ առաջին: Յերկրորդ, ճիշտ չե, թե ընկ. Լենինն այն ժամանակ իր քննադատություն մեջ չի շո-շափել ընդհանրապես պետություն «պայ-թեցման», «վերացման» թեորիան: Լենինը վոչ միայն շոշափել ե այդ թեորիան, ինչ-պես այդ յերևում ե վերը իմ բերած ցի-տատներից, այլև նա խիստ քննադատել ել ե այն վորպես անարխիստական թեորիա՝

նրան հակադրելով բուրժուազիային տա-
պալելուց հետո նոր պետություն, այն է՝
պրոլետարական շիկտատուրայի պետու-
թյուն ստեղծելու թեորիան: Վերջապես, պե-
տության «սլայթեցման» անարխիստական
թեորիան չի կարելի շփոթել բուժուակա-
պետական մեքենան «Ջարդելու», «փշրելու»
վերաբերյալ մարքսիստական թեորիայի
հետ: Ընկերներից վոմանք հակամետ են
շփոթելու այս յերկու տարբեր հասկացողու-
թյունները, կարծելով, թե դրանք միևնույն
մտքի արտահայտություններ են: Բայց այդ
սխալ է: Բոլորովին սխալ է, ընկերներ: Լե-
նինը հենց բուժուակապետական մեքե-
նան «Ջարդելու» մարքսիստական թեորիա-
յից եր յեկնում, յերբ նա քննադատում էր
ընդհանրապես պետության «սլայթեցման»
ու «վերացման» անարխիստական թեո-
րիան:

Թերևս ավելորդ չի լինի, յեթե ավելի
պարզություն մտցնելու նպատակով յես
այստեղ բերեմ ընկ. Լենինի ձեռագրերից
մեկը պետության մասին, վորը, ինչպես

յերևում է բոլոր նշաններից, գրված է
1916 թվականի վերջին կամ 1917 թվակա-
նի սկզբին (մինչև 1917 թ. Փետրվարյան
հեղափոխությունը): Այդ ձեռագրից կարելի
յե հշտություն մտնել, վոր ա) պետու-
թյան հարցում ընկ. Բուխարինի ունեցած
կիսամարքսիստական սխալները քննադա-
տելիս Լենինը յեկնում էր բուրժուական-
պետական մեքենան «Ջարդելու» մարքսիս-
տական թեորիայից, բ) վոր թեև Բուխա-
րինը, ըստ Լենինի արտահայտություն,
«ավելի մոտ է ճշմարտությանը, քան Կաուց-
կին», բայց նա, այնուամենայնիվ, «Կաուց-
կիականներին մերկացնելու փոխարեն՝ իր
սխալներով ոգնում է նրանց»: Ահա այդ
ձեռագրի տեքստը.

«Պետության վերաբերյալ հարցում չափազանց
մեծ կարեւորություն ունի Նեգլյուի նամակը Բերեկին
1875 թ. մարտի 16/28-ին:

Ահա նրա ամենազգալի տեղն ամբողջությամբ.

«... Ազատ ժողովրդական պետությունը
փոխարկվել է ազատ պետության: Ըստ այդ
բառերի քերականական իմաստի՝ ազատ պետու-
թյունն այնպիսին է, վորտեղ պետությունն

ազատ ե իր քաղաքացիներին նկատմամբ, այսինքն՝ բռնակալական կառավարություն ունեցող պետություն ե: Հարկավոր եր դեմ գցել պետության վերաբերյալ այդ ամբողջ ճաղակերանները, մանավանդ Կոմունայից հետո, վորն արդեն բուն իմաստով պետություն չեր: Հեղուկը դադարեց պետությունով՝ անարխիստներն ավելի քան բավականաչափ ծակում եյին մեր աչքը, թեև արդեն Պրուդոնի դեմ ուղղած Մարքսի յերկը ե ապա «Կոմունիստական մանիֆեստն» ուղղակի ասում են, վոր սոցիալիստական հասարակարգ մտցնելով՝ պետությունն ինքնիրեն լուծվում ե (sich auflöst) ու չեմուտ: Քանի վոր պետությունը սոսկ անցյողիկ հաստատություն ե, վորից հարկ ե լինում որոշել պայքարի մեջ, հեղափոխության մեջ՝ իր հակառակորդներին բռնություն բնշելու համար, ուստի ազատ ժողովրդական պետության մասին խոսելը դուռ անմուտություն ե. քանի դեռ պրոլետարիատը պետության կարիք ունի, նա զբաղարկեց ունի վո՛չ քե ազատության ճանի համար, այլ իր հակառակորդներին ճնշելու ճանի համար, իսկ յերբ հնարավոր ե լինում ազատության մասին խոսել, այն ժամանակ պետությունն իբրեւ այդպիսին դադարում ե գոյություն ունենալուց: Այս պատճառով մենք կառավարիչներ պետություն բառի տեղ ամիսներեք դնել հա-

մայնք» (Gemeinwesen) բառը, գերմաներեն մի սքանչելի հին բառ, վորը համապատասխանում ե ֆրանսերեն «կոմունա» բառին» (ընդգծումն Ենգելսինն ե):

Սա Մարքսի ու Ենգելսի մոտ, թերեւ, ամենաուշագրավ ու հավանորեն ամենակտրուկ տեղն ե, այսպես ասած՝ «պետության դեմ»:

(1) Հարկավոր ե դեն գցել պետության վերաբերյալ ամբողջ շաղակերանությունը:

(2) «Կոմունան արդեն իսկական իմաստով պետություն չեր: (Իսկ ի՞նչ եր: Յերբի՝ անցման ձև ե պետությունից դեպի վո՛չ-պետությունը):

(3) Անարխիստները բավական «ծակել են մեր աչքը» (in die Zähne geworfen, բառացի՝ մեր դնչին են տվել) «ժողովրդական» պետությունով» (ուրեմն Մարքսն ու Ենգելսն ամաչում եյին իրենց գերմանացի բարեկամների այս ակնհայտ սխալից. սակայն նրանք այն համարում եյին, ե, հասկանալի յե, այն ժամանակվա պոլիմաներին մայած ճիշտ կերպով, համարում եյին անհամեմատ պակաս կարեւոր նխադրան անարխիստների սխալը: Սա NB!!):

(4) Պետությունը «ինքնիրեն քայքայվում ե (չլուծվում ե)» (Nota Bene) ու չքանում» ... (հիմա, ավելի ուշ՝ «մահանում ե») «սոցիալիստական հասարակարգ մտցնելով» ...

(5) Պետությունը «ժամանակավոր հաստատություն» ե, վորը հարկավոր ե «պայքարի մեջ,

հեղափոխութեան մեջ» . . . (հասկանալի չե, հարկավոր ե պրոլետարիատին) . . .

(6) Պետութիւնը հարկավոր ե վոչ քե ազատութեան համար, այլ պրոլետարիատի հակառակորդներին նմանելու համար (Niederhaltung՝ իսկապէս ճշշումը չե, այլ ռեստավրացիայից հետ պահելը, հնազանդութեան մեջ պահելը):

(7) Յերբ ապստամբութուն լինի, այն ժամանակ պետութիւնը չի լինի:

(8) «Մենք (այսինքն՝ Ենգելսն ու Մարքսը) կառավարելիքնք «ամենուրեք» (ծրագրում) «պետութեան» փոխարեն ասել—«համայնք» (Gemeinwesen), «կոմունա»!!!

Այստեղից յերևում ե, թե Մարքսին ու Ենգելսին ինչպէս են գռնակացրել, ապականել վնչ միայն ուղղութիւնները, այլե կառուցիկն:

Ուղղութիւններն այս 8 ամենահարուստ մտքերից վոչ մեկը չեն հասկացել:

Նրանք վերցրել են ներկայի միայն պրակտիկ հարկավորութիւնը—պրոլետարիատին սովորեցնելու, դաստիարակելու համար, «գիշումներ կորզելու» համար ոգտագործել քաղաքական պայքարը, ոգտագործել արդի պետութիւնը, Սա ճեշտ ե (անարժեքտեղութիւն), բայց այս մարքսիզմի դեռեւ լոկ $\frac{1}{100}$ -ն ե, յեթե կարելի չե այսպէս թվաբանորեն արտահայտվել:

Կառուցիկն իր պրոպագանդիստական ե առհասարակ

րակ հրապարակախոսական աշխատանքում բոլորովին քողարկել ե (թե մոռացել ե, թե չի հասկացել) Մարքսի 1, 2, 5, 6, 7, 8 կետերը ե Մարքսի «Zerbrechen»-ը: (Պաննեկուլի հետ բանավիճելիս 1912 կամ 1913 թ. Կառուցիկն (տես ստորեւ, եջ 45—47) այս հարցում արդեն բոլորովին զրոյվել ե ուղղութիւնի մի մեջ) . . .

Անարխիստներից մեզ տարբերում ե (ա) պետութեան ոգտագործումն այժմ ե (բ) պրոլետարիատի հեղափոխութեան ժամանակ («պրոլետարիատի ղեկաւորութեան») — կետեր, վորոնք կարեւորագույնն են պրակտիկայի համար, իսկույն եեթ: (չենց զբաղեւ ե, վոր Բուխարինը մոռացել ե):

Ուղղութիւնները—ափելի խորը, «ափելի հաւերժական» ճշմարտութիւնները (աա) պետութեան «ժամանակավոր» բնույթի մասին, (բբ) նրա մասին «շաղկապատելու» վնասակարութեան մասին այժմ, (γγ) պրոլետարիատի ղեկաւորութեան վոչ-բոլորովին պետական բնույթի մասին, (ծծ) պետութեան ե ապստամբութեան հակասականութեան մասին, (էէ) պետութեան փոխարեն «համայնքի» ափելի ճիշտ գաղափարի (հասկացողութեան, ծրագրային տերմինի) մասին, (էէ) բոլորակատարական-ոգտական մեքենան «ճարգելու» (Zerbrechen) մասին: Չմոռանանք մի բան ել, վոր Գերմանիայի բացահայտ ուղղութիւնները (Բեռնշտայն, Կոլը etc.) պրոլետարիատի դիկտատումն ուղղակի կերպով են ժխտում, իսկ պաշտօնա-

կան ծրագրերն ու Կառուցկին՝ անուղղակի կերպով՝ ամենուրյա ազիտացիայի մեջ լռելով նրա մասին ու հանդուրժելով Կոլբերի ու Ընկ. բնեկառությունը:

1916 թ. ոգոստոսին Բուխարինին գրված է յեղեւ. «Թող պետութեան վերաբերյալ քո մտքերը հասունանան»: Իսկ նա, չբողբելով, վոր հասունանան, մամուլ մտավ վորպես «Nota Bene», և դա այնպես արեց, վոր կառուցկիականներին մերկացնելու փոխարեն իր սխալներով ոգնեց նրանց . . . Իսկ ըստ բանի ելութեան՝ Բուխարինն ավելի մոտ է ճշմարտութեան, քան Կառուցկին» (Ն. Լենին):

Այս է պետութեան հարցի վերաբերյալ թեորիական վեճի համառոտ պատմութիւնը:

Թվում է, թե բանը պարզ է. Բուխարինը կիսաաւարիստական սխալներ է թույլ տվել. ժամանակն է ուղղելու այդ սխալները և առաջ գնալու Լենինի ճանապարհով: Բայց այսպես կարող են մտածել միայն լենինիստները: Բուխարինը, բանից դուրս է գալիս, սրան համաձայն չէ: Ընդհակառակը, նա պնդում է, թե սխալվել է վնչ թե ինքը, այլ Լենինը, վոր վնչ թե ինքն է գնացել կամ պետք է գնա Լենինի ճանա-

պարհով, այլ, ընդհակառակը, Լենինը հարկադրված յեղավ գնալու Բուխարինի հետքերով: Դուք չե՞ք հաճատում, ընկերներ: Այդ դեպքում լսեցեք շարունակութիւնը: Այս վեճերից հետո, վորոնք տեղի ունեցին 1916 թ., դրանից 9 տարի անց, վորոնց ընթացքում ընկ. Բուխարինը լուսթյուն եր պահպանում, Լենինի մահից մի քաբի անց, այն է՝ 1925 թվականին «Իրավունքի հեղափոխութիւն» («Революция права») ժողովածուի մեջ ընկ. Բուխարինը տպում է «Իմպերիալիստական պետութեան թեորիայի շուրջը» հոդվածը, վորն իր ժամանակ «Սոցիալ-դեմոկրատի ժողովածուի» խմբագրութիւնը (այսինքն՝ Լենինը) տպագրութեան չէր ընդունել, և այդ հոդվածի ծանօթագրութեան մեջ նա ուղղակի հայտարարում է, վոր այդ վեճի մեջ իրավացի յե յեղել վնչ թե Լենինը, այլ ինքը՝ Բուխարինը: Այս կարող է անհավատալի թվալ, բայց սա փաստ է, ընկերներ:

Լսեցեք այդ ծանոթագրութեան տեքստը.

«Յերիտասարդության ինտերնացիոնալի» մեջ դեռեղված հողվածի դեմ դիտողությամբ հանդես յեկավ Վ. Ի.-ն (այսինքն՝ Լենինը)։ Ընթերցողները հեշտությամբ կտեսնեն, վոր յես չունի այն սխալը, վոր ինձ վերագրվում եր, վորովհետև յես հասակորեն տեսնում եյի պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը։ մյուս կողմից, Իլյինի դիտողությունից յերևում ե, վոր նա այն ժամանակ սխալ եր վերաբերվում պետւթյան (հասկանալի յե, վոր բուրժուական) պայքեցման դրույքին, այս ցարք լիորեն լի պրոլետարիատի դիկտատուրայի մտնացման հարցի հետ։ Գուցե հարկավոր եր, վոր յես այն ժամանակ ավելի զարգացնեյի դիկտատուրայի թեման։ Բայց ինձ արդարացնելու համար կարող եմ ասել, վոր այն ժամանակ բուրժուական պետության մի այնպիսի համատարած սոցիալ-դեմոկրատական գովերգություն կար, վորի առկայությամբ ընական եր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել այդ մեքենայի պայքեցման հարցի վրա։

Յերբ յես Ամերիկայից Ռուսաստան յեկա ու տեսա Նադեժդա Կոնստանտինովնային (այդ մեր անլեզու ՎԻ համադրումարում եր, և այդ ժամանակ Վ. Ի. թագնվում եր), նրա առաջին խոսքերը սրանք եյին. «Վ. Ի. խնդրեց հաղորդել ձեզ, վոր պետության հարցում նա այժմ տարածայնություններ չունի ձեզ

¹ Ընդգծումն իմն ե։ Ի. Սս.։

հետ։ Այդ հարցով զբաղվելով՝ Իլյինը Հայթիցման վերաբերմամբ յեկավ նույն յեզակացություններին, բայց նա այդ թեման, իսկ այնուհետև նաև դիկտատուրայի վերաբերյալ ուսմունքն այնքան զարգացրեց, վոր թեորիական մտքի այդ ուղղությամբ կատարած զարգացման մեջ մի ամբողջ դարաշրջան ստեղծեց»։

Ընկ. Բուխարինն այսպես ե գրում Լենինի մասին նրա մահվանից մի քառի անց։

Ահա ձեզ թիրուս թեորեաիկի՝ հիպերտրոֆիայի յինթարկված հավակնոտության մի նմուշ։

Միանգամայն հնարավոր ե, վոր Նադեժդա Կոնստանտինովնան իրոք ասել ե ընկ. Բուխարինին այն, ինչի մասին ընկ. Բուխարինը գրում ե այստեղ։ Բայց սրանից ի՞նչ ե հետևում։ Սրանից միայն մի բան ե հետևում, վոր Լենինը վորոշ հիմքեր ուներ կարծելու, թե ընկ. Բուխարինը հրաժարվել և կամ պատրաստ ե հրաժարվելու իր սխալ-

¹ Ընդգծումն իմն ե։ Ի. Սս.։

² «Իրավունքի հեղափոխություն» (Революция права) ժող. I, հրատ. Կոմունիստական Ակադեմիայի, 1925 թ., էջ 5։

ներկից: Միմիայն այսքանը: Բայց ընկ.
Բուխարինն այլ կերպ է հաշիվ արել: Նա
վճռել է, վոր այսուհետև պետության մարք-
սիստական թևորխայի ստեղծող, կամ, հա-
մենայն դեպս, ներշնչող, պետք է համարվի
վոչ թե Լենինը, այլ ինքը, այսինքն՝ ընկ.
Բուխարինը:

Մինչև այժմ մենք մեզ լենինիստներ
ենք համարել ու շարունակում ենք համա-
րել: Իսկ այժմ բանից դուրս է գալիս, վոր
թե Լենինը, թե մենք՝ նրա աշակերտները,
բուխարինականներ ենք: Մի քիչ ծիծաղելի
յե, ընկերներ: Բայց ինչ կարող ես անել,
յերբ հարկ է լինում գործ ունենալ ընկ.
Բուխարինի փքված հավակնոտության հետ:

Կարելի չե կարծել, թե վերոհիշյալ հող-
վածի իր ծանոթագրության մեջ ընկ. Բու-
խարինը վրիպել է, թե նա հիմարություն
է ասել ու հետո մոռացել է նրա մասին:
Բայց բանից դուրս է գալիս, վոր դա ուղիղ
չե: Ընկ. Բուխարինը, բանից դուրս է գա-
լիս, միանգամայն լուրջ է ասել Դա յերևում
է թեկուզ այն բանից, վոր ընկ. Բուխարի-

նի հայտարարությունը Լենինի սխալների
ու Բուխարինի իրավացիության մասին, վոր
նա արել է այդ ծանոթագրության մեջ,
նորից է հրապարակվել մոտ ժամանակներս,
այն է՝ 1927 թվականին, այսինքն՝ ընկ.
Բուխարինի կողմից Լենինի դեմ գործած
առաջին արտելքից յերկու տարի անց, ընկ.
Բուխարինի մասին ընկ. Մարեցկու գրած
կենսագրական ակնարկում (տե՛ս «Սորհըր-
դային հնցիկլոպեդիան»), ընդ վորում ընկ.
Բուխարինը չի ել մտածել ըողոքելու ընկ.
Մարեցկու այդպիսի . . . համարձակության
դեմ: Պարզ է, վոր ընկ. Բուխարինի յերույ-
թը Լենինի դեմ չի կարելի պատահակա-
նություն համարել:

Այսպիսով դուրս է գալիս, վոր իրավա-
ցի չե Բուխարինը և վոչ թե Լենինը, վոր
պետության մարքսիստական թևորխայի
ներշնչողը վոչ թե Լենինն է, այլ Բուխա-
րինը:

Այս է, ընկերներ, ընկ. Բուխարինի
թևորխական խեղությունների (вывихов) ու

թիորիական հավակնությունները պատկերը:

Յեվ այդ մարդն այս ամենից հետո համարձակություն ունի այստեղ իր ճառում ասելու, թե մեր կուսակցության թիորիական դիրքավորման մեջ «ինչ-վոր մի բան վատձ ե», վոր մեր կուսակցության թիորիական դիրքավորման մեջ թեքում կա դեպի արոցկիդմը: Յեվ այդ ասում ե հենց ա՛յն ընկ. Բուխարինը, վոր թույլ ե տալիս (ու թույլ ե տվել անցյալում) մի շարք ամենակրպիտ թիորիական ու պրակտիկ սխալներ, վորը դեռևս մոտ անցյալում աշակերտում եր Տրոցկուն, վորը դեռևս յերեկ ձգտում եր բլոկ կազմել արոցկիստների հետ լինինխատների դեմ ու հետին մուտքով նրանց մոտ եր վազում: Դեհ, միթե այս ծիծաղելի չե, ընկերներ:

է) ՀՆԳԱՄՅԱԿ ԹԵ ՅԵՐԿԱՄՅԱԿ

Այժմ թույլ տվեք անցնել ընկ. Ռիկովի ճառին: Յեթե ընկ. Բուխարինը փորձում եր

տալ աջ թեքման թիորիական հիմնավորումը, ապա ընկ. Ռիկովն իր ճառում ջանում ե այդ բանի տակ պրակտիկ առաջարկությունների բազա քաշել, մեղ վախեցնելով դուրսադուրսության գծով մեր ունեցած դժվարությունների բնագավառից առնված «սարսափներով»: Այս չի նշանակում, թե ընկ. Ռիկովը թիորիական հարցեր չշոշափեց: Վո՛չ, նա այդ հարցերը շոշափեց: Բայց, դրանք շոշափելով, թույլ տվեց գոնե յերեկուրջ սխալ:

Հնգամյա պլանի վերաբերյալ բանաձևի իր նախագծում, վորը մերժվեց Դադրյուրոյի հանձնաժողովի կողմից, ընկ. Ռիկովն ասում ե, թե «հնգամյա պլանի կենտրոնական գաղափարը ժողովրդական աշխատանքի արտադրողականության աճումն ե»: Չնայած այն բանին, վոր Դադրյուրոյի հանձնաժողովը մերժեց այդ միանգամայն սխալ դիրքավորումը, ընկ. Ռիկովն այստեղ իր ճառում պաշտպանում եր այն: Ծի՞շտ ե արդյոք, վոր խորհրդային յերեկում հնգամյա պլանի կենտրոնական գաղափարն աշխա-

տանքի արտադրողականութեան աճումն եւ վնջ, սխալ եւ Չէ վոր մեզ հարկավոր ե ժողովրդական աշխատանքի արտադրողականութեան վոչ ամեն ճեսակի աճում: Մեզ հարկավոր ե ժողովրդական աշխատանքի արտադրողականութեան վարժ տեսակի աճում,—այն ե՝ այնպիսի աճում, վորն ապահովում ե ժողովրդական ճեսեսութեան սոցիալիսական մեկտորի սիսեսմասիկ գերակեռութունը կապիտալիսական մեկտորից: Ահա թե բանն ինչումն ե, ընկերներ: Այն հնգամյա պլանը, վոր կմուսնա այս կենտրոնական գաղափարի մասին, հնգամյա պլան չե, այլ հնգամյա ցնդաբանութիւն: Աշխատանքի արտադրողականութեան աճամբ շահագրգռած ե ընդհանրապես ամեն մի հասարակութիւն՝ թե կապիտալիստականը, թե մինչ-կապիտալիստականը: Խորհրդային հասարակութեան տարբերութիւնն ամեն մի այլ հասարակութիւնից հենց այն ե, վոր նա շահագրգռած ե աշխատանքի արտադրողականութեան վոչ ամեն մի աճամբ, այլ այնպիսի աճամբ, վորն ապահովում ե

տնտեսութեան սոցիալիստական ձևերի դերակշռութիւնն այլ ձևերից ե ամենից առաջ տնտեսութեան կապիտալիստական ձևերից, վորն այդպիսով ապահովում ե տնտեսութեան կապիտալիստական ձևերի հաղթահարումն ու արտամղումը: Իսկ ընկ. Ռիկովը մոռացել ե խորհրդային հասարակութեան զարգացման հնգամյա պլանի այս իսկապես կենտրոնական գաղափարի մասին: Այս ե նրա թեորիական առաջին սխալը:

Նրա յերկրորդ սխալն այն ե, վոր նա ապրանքաշրջանառութեան տեսակետից տարբերութիւն չի դնում կամ չի ցանկանում հասկանալ տարբերութիւնը, ասենք, կոլտնտեսութեան ե ամեն մի անհատական տնտեսութեան, այդ թվում անհատական կապիտալիստական տնտեսութեան միջև: Ընկ. Ռիկովը համատացնում ե, թե հացի շուկայում յեղած ապրանքաշրջանառութեան տեսակետից, հաց ստանալու տեսակետից ինքը տարբերութիւն չի տեսնում կոլտնտեսութեան ե մասնավոր հացատիրոջ միջև, հետեալաբ՝ նրա համար միևնույնն ե, ար-

դյոք մինք հացը կոլտնտեսությունից ենք
 դնում, մասնավոր հացատիրոջից, թե հացի
 վրեժն արդեն տիրյան մեծագնորդից: Սա
 սխալ է, ընկերներ: Սա միանգամայն սխալ
 է: Սա կրկնությունն է ընկ. Ֆրոմմիլինի
 հայտնի հայտարարության, վորը մի ժամա-
 նակ հավատացնում էր, թե իրեն համար
 միևնույնն է հացը վորտեղ դնել և ումից
 դնել՝ մասնավորից, թե կոլտնտեսությունից:
 Սա հացի շուկայում կատարվող կուլակային
 մեքենայությունների պաշտպանության,
 ուհաբեխիտացիայի, արդարացման դիմակա-
 վորված ձևն է: Այն փաստը, վոր այս
 պաշտպանությունը կատարվում է ապրան-
 քաշրջանառության տեսակետից, — այդ փաս-
 տը չի փոխում գործի ելությունը, վոր դա
 այնուամենայնիվ հացի շուկայում կատար-
 վող կուլակային մեքենայությունների ար-
 դարացումն է: Յեթե ապրանքաշրջանառու-
 թյան տեսակետից տարբերություն չկա
 տնտեսության կոլեկտիվ ու վոչ-կոլեկտիվ
 ձևերի միջև, ապա այն ժամանակ արժե՞
 արդյոք կոլտնտեսությունները զարգացնել,

արժե՞ արդյոք նրանց արտոնություններ տալ,
 արժե՞ արդյոք զբաղվել գյուղատնտեսության
 մեջ կապիտալիստական տարրերին հաղթա-
 հարելու դժվար խնդրով: Պարզ է, վոր ընկ.
 Ռիկովը սխալ դիքավորում է վերցրել: Այս
 է նրա թեորեական յերկրորդ սխալը:

Բայց այս անցողակի կերպով: Անցնենք
 ընկ. Ռիկովի ճառում դրված գործնական
 հարցերին:

Ընկ. Ռիկովն այստեղ պնդում էր, վոր
 բացի հնդամյա պլանից, հարկավոր է ելի
 մի ուրիշ, դուգահեռ պլան, այն է՝ գյուղա-
 տնտեսության զարգացման յերկամյա պլան:
 Զուգահեռ յերկամյա պլանի այդ առաջար-
 կը նա հիմնավորում էր գյուղատնտեսու-
 թյան մեջ յեղած դժվարություններով: Նա
 ասում էր. հնդամյա պլանը լավ բան է, և
 ինքը դրան կողմնակից է, բայց յեթե մինք
 միաժամանակ տանք գյուղատնտեսության
 յերկամյա պլանը, ապա ել ավելի լավ կլի-
 նի, — հակառակ դեպքում գյուղատնտեսու-
 թյան գործը կանգ կառնի: Արտաքուստ
 այս առաջարկը կարծես թե վոչ մի վատ

բան չի ներկայացնում: Բայց յեթե գործին մոտիկից նայելու լինենք, դուրս ե գալիս, վոր գյուղատնտեսութեան յերկամյա պլանը հնարված ե այն նպատակով, վորպեսզի ընդգծվի հնգամյա պլանի վոչ-ուեսը, թղթային բնույթը, ե ընդհակառակը: Կարո՞ղ եյինք մենք արդոք համաձայնել սրան: Պարզ ե, վոր չեյինք կարող: Մենք ընկ. Ռիկովին ասում եյինք. յեթե դուք դժգոհ եք գյուղատնտեսութեան հնգամյա պլանից, յեթե դուք անբավարար եք համարում այն հատկացումները, վորոնք հնգամյա պլանով տրբվում են գյուղատնտեսութեան զարգացման համար, ապա ուղղակի ասացեք ձեր լրացուցիչ առաջարկների մասին, ձեր լրացուցիչ ներդրումների մասին,—մենք համաձայն ենք հնգամյա պլանի մեջ մտցնելու այդ լրացուցիչ ներդրումները գյուղատնտեսութեան համար: Յե՞վ լի՞նչ: Բանից դուրս յեկա՞վ, վոր ընկ. Ռիկովը վոչ մի լրացուցիչ առաջարկ չունի գյուղատնտեսութեան համար լրացուցիչ ներդրանքներ անելու մասին: Հարց ե ծագում, ել ինչի՞ համար ե

այն ժամանակ գյուղատնտեսութեան գու-գահեռ յերկամյա պլանը: Այնուհետև մենք ասում եյինք նրան. բացի հնգամյա պլանից, կան նաև տարեկան պլաններ, վորոնք հնգամյակի մասն են. յեկեք առաջին յերկու տարվա տարեկան պլանները մեջ մտցնենք գյուղատնտեսութեան վերելքի դժով արվող այն լրացուցիչ կոնկրետ առաջարկները, վոր այն լրացուցիչ կոնկրետ առաջարկներ: Յե՞վ լի՞նչ: Բանից դուրս յեկա՞վ, վոր ընկ. Ռիկովը ասում ե, յեթե դուք ունեք, յեթե ընկ. Ռիկովը առհասարակ ունի այդպիսի առաջարկներ: Յե՞վ լի՞նչ: Բանից դուրս յեկա՞վ, վոր ընկ. Ռիկովը լրացուցիչ հատկացումների այդպիսի կոնկրետ պլաններ չունի առաջարկելու: Այն ժամանակ մենք հասկացանք, վոր յերկամյա պլանի մասին ընկ. Ռիկովի առաջարկի մեջ նկատի յի առնվում վնչ թե գյուղատնտեսութեան վերելքը, այլ հնգամյակի վոչ-ուեսը, թղթային բնույթն ընդգծելու ցանկությունը, հնգամյակը պատկազերծ անելու ցանկությունը: «Հոգու» համար, ձեի համար—հնգամյա պլան, գործի համար, գործնական աշխատանքի համար—յերկամյա պլան,—ահա թե ինչպիսի ստրա-

տեղիս ստացվեց ընկ. Ռիկովի մոտ: Ընկ. Ռիկովի մոտ յերկամյա պլանը բնւ զուրս յեկավ, վորպեսզի հետո, հնգամյա պլանի գործնական իրականացման ընթացքում, հնգամյակին հակադրվի յերկամյակը, հնգամյակը վերականգնվի ու հարմարեցվի յերկամյա պլանին՝ կրճատելով ու խուզելով ինդուստրիայի գործի համար արվող հատկացումները:

Ահա թե ինչ նկատառումներով մենք մեթոցինք ընկ. Ռիկովի առաջարկը զուգահեռ յերկամյա պլանի մասին:

բ) ՑԱՆՔԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ընկ. Ռիկովն այստեղ կուսակցությանը վախեցնում էր՝ հավատացնելով, վոր ցանքի տարածությունները ԽՍՀՄ-ում սխտեմատիկաբար կրճատվելու տենդենց ունեն: Ընդ սմին նա գլխով էր անում կուսակցության կողմը, ակնարկելով այն բանը, վոր ցանքի տարածությունների կրճատման մեղավորը կուսակցության քաղաքականու-

թյունն է: Նա ուղղակի չէր ասում, թե մեղա-
նում բանը դեպի զեզրադացիս յե դնում:
Բայց նրա ճառից այնպիսի տպավորություն է
ստացվում, վոր մենք զեզրադացիայի նման
մի բան առկա ունենք: Ճիշտ է արդյոք,
վոր ցանքի տարածությունները սխտեմա-
տիկ կրճատման տենդենց ունեն: Վնչ, ճիշտ
չէ: Ընկ. Ռիկովն այստեղ գործառում էր
յերկրի ցանքի տարածությունների վերա-
բերյալ միջին թվերով: Բայց միջին թվերի՝
շրջանների տվյալներով չարդարված՝ մե-
թոդը գիտական մեթոդ չէ: Գուցե ընկ.
Ռիկովը յերբեիցե կարդացել է Լենինի «Կա-
պիտալիզմի զարգացումը»: Յեթե նա կար-
դացել է, նա պետք է հիշի, թե Լենինն
այնտեղ կնչպես է հայեոյում բուրժուական
տնտեսագետներին, վորոնք ոգտվում են
ցանքի տարածությունների աճման վերա-
բերյալ միջին թվերի մեթոդից և անտեսում
են ըստ շրջանների տվյալները: Տարորինակ
է, վոր ընկ. Ռիկովն այժմ բուրժուական
տնտեսագետների սխալներն է կրկնում:
Յեւ ահա, յեթե քննության տունք ցան-

տեղիս ստացվեց ընկ. Ռիկովի մոտ: Ընկ.
Ռիկովի մոտ յերկամյա պլանը բեռ դուրս
յեկավ, վորպեսզի հետո, հնդամյա պլանի
գործնական իրականացման ընթացքում,
հնգամյակին հակադրվի յերկամյակը, հնգա-
մյակը վերակազմվի ու հարմարեցվի յեր-
կամյա պլանին՝ կրճատելով ու խուզելով
ինդուստրիայի գործի համար արվող հատ-
կացումները:

Ահա թե ինչ նկատառումներով մենք
մերժեցինք ընկ. Ռիկովի առաջարկը դու-
րահեռ յերկամյա պլանի մասին:

բ) ՅԱՆՔԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ընկ. Ռիկովն այստեղ կուսակցությանը
վախեցնում եր՝ հավատացնելով, վոր ցանքի
տարածությունները ԽՍՀՄ-ում սխտեմա-
տիկաբար կրճատվելու տենդենց ունեն:
Ընդ սմին նա գլխով եր անում կուսակցու-
թյան կողմը, ակնարկելով այն բանը, վոր
ցանքի տարածությունների կրճատման մե-
ղավորը կուսակցության քաղաքականու-

թյունն է: Նա ուղղակի չիր ասում, թե մեղա-
նում բանը դեպի զեզրադացիս յե դնում:
Բայց նրա ճառից այնպիսի տպավորություն է
ստացվում, վոր մենք զեզրադացիային նման
մի բան առկա ունենք: Ճիշտ է արդյոք,
վոր ցանքի տարածությունները սխտեմա-
տիկ կրճատման տենդենց ունեն: Վսչ, ճիշտ
չէ: Ընկ. Ռիկովն այստեղ գործառում եր
յերկրի ցանքի տարածությունների վերա-
բերյալ միջին թվերով: Բայց միջին թվերի՝
շրջանների տվյալներով չարագրված՝ մե-
թոքը դիտական մեթոդ չէ: Գուցե ընկ.
Ռիկովը յերբեկեց կարդացել է Լենինի «Կա-
պիտալիզմի զարգացումը»: Յեթե նա կար-
դացել է, նա պետք է հիշի, թե Լենինն
այնտեղ ինչպես է հայհոյում բուրժուական
տնտեսագետներին, վորոնք ոգտվում են
ցանքի տարածությունների աճման վերա-
բերյալ միջին թվերի մեթոդից և անտեսում
են ըստ շրջանների տվյալները: Տարրինակ
է, վոր ընկ. Ռիկովն այժմ բուրժուական
տնտեսագետների սխալներն է կրկնում:
Յեղ ահա, յեթե քննության առնենք ցան-

քի տարածությունների շարժումն ըստ
շրջանների, այսինքն՝ յեթե դորժին մոտե-
նանք դիտականորեն, ապա դուրս ե գալիս,
վոր վորոշ շրջաններում ցանքի տարածու-
թյունները սխսեմասիկոտեմ աճում են,
մյուսներում—նրանք յերբեմն նվազում են,
զլխաժորապես նայած ողերևութաբանական
պայմաններին, ընդվորում չկան այնպիսի
տվյալներ, վորոնք խոսեյին այն մասին,
թե մենք վորեւ տեղ, լուրջ հացաբեր շրջան-
ներից թեկուզ մեկում, ցանքի տարածու-
թյունների սխսեմասիկ կրճատում ունենք:

Իրոք, ցրտահարությամբ կամ յերաշտով
բռնված շրջաններում, որինակ, Ուկրաինա-
յի միքանի մարզերում, ցանքի տարածու-
թյունները վերջին ժամանակներս կրճա-
տում են ցույց տալիս:

Մի ձայն: Վոչ ամբողջ Ուկրաինան:

Նիխտե: Ուկրաինայում ցանքի տարա-
ծություններն ափեւացիլ են 2,7% -ով:

Աջալիմ: Յես նկատի ունեմ Ուկրաինայի
տափաստանային շրջանը: Իսկ այ ուրիշ
շրջաններում, այսինքն՝ Սիբիրում, Պովոլ-

ժիյում, Կազակստանում, Բաշկիրիայում,
վորոնք չեն վնասվել կլիմայական աննպաստ
պայմաններից, ցանքի տարածությունները
սխսեմատիկաբար աճում են: Ինչո՞վ բա-
ցատրել, վոր վորոշ շրջաններում ցանքի
տարածությունները սխսեմատիկաբար ա-
ճում են, իսկ մյուսներում՝ յերեմն կրճատ-
վում են: Իսկապես հո չի՞ կարելի պնդել,
թե կուսակցությունը Ուկրաինայում ունի
մի քաղաքականություն, իսկ արեւելքում
կամ ԽՍՀՄ-ի կենտրոնում—մեկ ուրիշ: Չե՞
վոր սա արագուղ ե, ընկերներ: Պարզ ե
վոր կլիմայական պայմաններն այստեղ սա-
կավ կարեւր նշանակություն չունեն:

Ճիշտ ե, վոր կուլակները ցանքի տա-
րածությունները կրճատում են՝ անկախ
կլիմայական պայմաններից: Սրանում, թեր-
եւ, «մեղավոր ե» կուսակցության քաղաքա-
կանությունը, վորի եյությունն այն ե, վոր
աջակցինք չքաժոր-միջակային մաստաներին
կուլակության դեմ: Բայց սրանից ի՞նչ ե
հետևում: Մի՞թե մենք յերբեւ պարտավոր-
վել ենք այնպիսի քաղաքականություն

վարել, վորը կարողանար բավարարել գյուղի սոցիալական բոլոր խմբերին, այդ թվում նաև կուլակներին: Յեւ վաղ առհասարակ, միթե մենք կարող ենք վարել այնպիսի քաղաքականութիւն, վորը բավարարէր թե՛ շահագործողներին, թե՛ շահագործվողներին, յետեւ մենք առհասարակ ցանկանում ենք մարքսիստական քաղաքականութիւն վարել: Ի՞նչ մի առանձին բան կա այստեղ, յետեւ մեր լենինյան քաղաքականութիւն հետեւանքով, վորը նկատի չի առել կապիտալիստական տարրերի սահմանափակումն ու հաղթահարումը գլուղում, կուլակներն սկսում են մասնակիորեն կրճատել իրենց ցանքերը: Բայց միթե կարող ե այլ կերպ լինել: Գուցէ այդ քաղաքականութիւնը ճիշտ չէ,—թող այդ մասին ուղղակի ասեն մեզ: Տարրերնակ չէ՞ արդոք, վոր մարդիկ, վորոնք իրենց մարքսիստ են անվանում, կուլակների ցանքերի մասնակի կրճատումը վախից ջանում են ներկայացնել իբրեւ անհասարակ ցանքի տարածութիւնների կրճատում, մոռանում են այն մասին, վոր բացի

կուլակներից, գոյութիւն ունեն նաև չքավորներ ու միջակներ, վորոնց ցանքերն ընդարձակվում են, գոյութիւն ունեն կոլտընտեսութիւններ ու խորհրդատեսութիւններ, վորոնց ցանքերն աճում են արագացրած տեմպով:

Վերջապես, մի անճշտութիւն կա ընդ Ռիկովի ճառի մեջ ցանքերի տարածութիւնների հարցի վերաբերյալ: Ընդ Ռիկովի այստեղ դանդաղում էր, վոր տեղտեղ, այն ե՝ կոլտեսութիւնների առավելագոյն զարգացման տեղերում, չքավոր միջակային անհատական հողաշերտը (КХМ) սկսում ե կրճատվել: Այդ ճիշտ ե: Իսկ այստեղ ի՞նչ վատ բան կա: Ուրիշ ել ի՞նչ կերպ լինել: Յետեւ չքավոր-միջակային տնտեսութիւններն սկսում են թողնել անհատական հողաշերտը և անցնում են կոլեկտիվ տնտեսութիւն, ապա միթե պարզ չէ, վոր կոլտընտեսութիւնների ընդարձակման ու բազմապատկման հետեւանքը պետք ե լինի անհատական չքավոր-միջակային հողաշերտի վորոշ կրճատումը: Իսկ դուք ի՞նչպէս եք

ուղում: Այժմ կոլտնտեսությունները յերկու միլիոն հեկտարից ավելի հող ունեն: Հնդկամշակի վերջին կոլտնտեսությունները կուսիննան ավելի քան 25 միլիոն հեկտար: Այստեղ ունի հաշվին և աճում կոլտնտեսային հողաշերտը: Անհատական չքավոր-միջակային հողաշերտի հաշվին: Իսկ զուր լինչպես եք ուղում, թանդագին ընկերներ: Այլ կերպ անհատական չքավոր-միջակային տնտեսությունն լինչպես փոխադրենք կուլեկտիվ տնտեսության ուղերի վրա: Միթե պարզ չե, վոր կոլտնտեսային հողաշերտը մի ամբողջ շարք շրջաններում աճելու յե անհատական հողաշերտի հաշվին: Տարուրինակ և, վոր մարդիկ չեն ուղում այս պարզ բաները հասկանալ:

բ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հացի գործում մեր ունեցած զգալարությունների մասին այստեղ մի ամբողջ կույտ չեղած բաներ ասացին: Բայց մեր հացի կոնյունկտուրային զգալարությունների վեր-

խավոր մոմենտներն աչքաթող արին: Մոռացան ամենից առաջ այն, վոր հաճար ուցորեն այս տարի անցած տարվանից մի 500—600 միլիոն փութ պակաս հաղաքեցինք,—յես խոսում եմ բերքի համախառն հաղաքի մասին: Կարող եր արդյոք այս բանը չանդրադառնալ մեր հացամթերունների վրա: Իհարկե, չեր կարող չանդրադառնալ: Գուցե սրանում ԿԿ-ի քաղաքականությունն և մեղավոր: Վնչ, ԿԿ-ի քաղաքականությունն այստեղ գործ չունի: Սա բացատրվում և Ուկրաինայի տափաստանային շերտում յեղած լուրջ անբերքատվությամբ (ցրտահարություն ու յերաշտ) ու Հյուսիսային Կովկասում, Կենտրոնական Սևահող մարզում, վերջապես Հյուսիս-Արևմտյան մարզում յեղած մասնակի անբերքատվությամբ: Սրանով ել գլխավորապես բացատրվում և այն, վոր անցյալ տարի առ 1-ն ապրիլի մենք Ուկրաինայում մթերել եյինք 200 միլիոն փութ հաց (հաճար ուցորեն), իսկ այս տարի—ընդամենը 26—27 միլիոն փութ: Դարձյալ սրանով պետք

ուղում: Այժմ կոլտնտեսութեանները յերկու միլիոն հեկտարից ավելի հող ունեն: Հնդկամշակի վերջին կոլտնտեսութեանները կուսենան ավելի քան 25 միլիոն հեկտար: Այստեղ ռւս հաշիւին եւ աճում կոլտնտեսային հողաշերտը: Անհատական չքավոր-միջակային հողաշերտի հաշիւին: Իսկ զուք ինչպես եք ուղում, թանգագին ընկերներ: Այլ կերպ անհատական չքավոր-միջակային տնտեսութեան ինչպես փոխադրենք կուլեկտիվ տնտեսութեան ռեկտերի վրա: Միթե պարզ չե, վոր կոլտնտեսային հողաշերտը մի ամբողջ շարք շրջաններում աճելու յե անհատական հողաշերտի հաշիւին: Տարորինակ ե, վոր մարդիկ չեն ուղում այս պարզ բաները հասկանալ:

Ի) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հացի գործում մեր ունեցած դժվարութեանների մասին այստեղ մի ամբողջ կույտ չեղած բաներ ասացին: Բայց մեր հացի կոնյունկտուրային դժվարութեանների վեր-

խովոր մոմենտներն աչքաթող արին: Մոռացան ամենից առաջ այն, վոր հաճար ու ցորեն այս տարի անցած տարվանից մի 500—600 միլիոն փութ պակաս հավաքեցինք,—յես խոսում եմ բերքի համախառն հավաքի մասին: Կարող եր արդյոք այս բանը չանդրադառնալ մեր հացամթերումների վրա: Իհարկե, չեր կարող չանդրադառնալ: Գուցե սրանում ԿԿ-ի քաղաքականութեանն ե մեղավոր: Վնչ, ԿԿ-ի քաղաքականութեանն այստեղ գործ չունի: Սա բացատրվում ե Ուկրաինայի տափաստանային շերտում յեղած լուրջ անբերքատվութեամբ (ցրտահարութեան ու յերաշտ) ու Հյուսիսային Կովկասում, Կենտրոնական Սևահող մարզում, վերջապես Հյուսիս-Արևմտյան մարզում յեղած մասնակի անբերքատվութեամբ: Սըրանով ել գլխավորապես բացատրվում ե այն, վոր անցյալ տարի առ 1-ն ապրիլի մենք Ուկրաինայում մթերել էինք 200 միլիոն փութ հաց (հաճար ու ցորեն), իսկ այս տարի—ընդամենը 26—27 միլիոն փութ: Դարձյալ սրանով պետք

և բացատրել ցորենի ու հաճարի մթերում-
ների անկումը կենտրոնական Սևահող մար-
զում համարյա 8 անգամ և Հյուսիսային
Կովկասում—4 անգամ: Հացամթերումներն
արեւելքում այս տարի մի քանի շրջաններում
ավելացել են համարյա կրկնակի չափով:
Բայց նրանք չեյին կարող ծածկել ու չծած-
կեցին, իհարկե, հացի այն պակասը, վոր
մեզ մոտ գոյություն ունեւ Ուկրաինայում,
Հյուսիսային Կովկասում և Կենտրոնական
Սևահող մարզում: Չպետք է մոռանալ, վոր
նորմալ բերքերի դեպքում Ուկրաինան ու
Հյուսիսային Կովկասը մթերում են ԽՍՀՄ-
ում մթերվող ամբողջ հացի կեսից ավելին,
իսկ յերբեմն ել յերկու յերրորդականը: Տա-
րորինակ ե, վոր այս հանգամանքն ընկ-
նիկովն աչքաթող ե արել:

Վերջապես, յերկրորդ հանգամանքը, վոր
մեր հացամթերումների կոնյունկտուրային
դժվարությունների գլխավոր մոմենտն ե:
Յես նկատի ունեմ գյուղի կուլակային և
ուսնոր տարրերի ղեմադրությունը հա-
ցամթերումների վերաբերյալ Խորհրդային

իշխանության քաղաքականությանը: Ընկ-
նիկովը զանց առավ այս հանգամանքը:
Բայց զանց առնել այս մոմենտը՝ նշանա-
կում ե զանց առնել գլխավորը հացամթեր-
ման գործում: Ինչի՞ մասին ե խոսում հա-
ցամթերումների գործում վերջին յերկու
տարվա ձեռք բերած փորձը: Նա խոսում ե
այն մասին, վոր գյուղի կարողության տեւր
խավերը, վորոնք իրենց ձեռքին ունեն հա-
ցի նշանակալի ավելցուկներ ու հացի շու-
կայում իշխող դեր են խաղում, հոժարակամ
կերպով չեն ուզում հարկավոր քանակու-
թյամբ հաց տալ մեզ այն գներով, վոր
Խորհրդային իշխանությունն ե սահմանել:
Քաղաքներն ու արդյունաբերական կետերը,
Կարմիր բանակն ու տեխնիկական կուլտու-
րաների շրջանները հացով ապահովելու
համար մեզ հարկավոր ե տարեկան մոտ
500 միլիոն փութ հաց: Ինքնահոսի կարգով
մեզ հաջողվում ե մթերել մոտ 300—350
միլիոն փութ: Մնացած 150 միլիոն փութը
հարկ ե լինում վերցնել գյուղի կուլակային
և ուսնոր խավերի վրա կազմակերպված

Ճնշում գործ դնելու կարգով: Սհա թե ինչ
և ասում մեզ վերջին յերկու տարվա հա-
ցամթերումների փորձը:

Ի՞նչ է տեղի ունեցել այս յերկու տար-
վա ընթացքում, վորտեղից են այսպիսի փո-
փոխությունները, ինչո՞ւ առաջ ինքնահոռն
ողնում եր, իսկ այժմ անբավարար դուրս
յեկավ այն: Տեղի յի ունեցել այն, վոր կու-
լակային և ունևոր տարրերն այդ տարիներ-
ում աճել են, մի շարք բերրի տարիները
նրանց համար զուր չեն անցել, նրանք
ամրացել են տնտեսապես, փոքրիկ կապի-
տալ են կուտակել և այժմ նրանք կարող
են մանեվրել շուկայում, իրենց մոտ պահե-
լով հացի ափեցուկները՝ սպասելով բարձր
գների ու մյուս կուլտուրաներով շրջանա-
ռություն կատարելով: Հացը հասարակ ապ-
րանք չե: Հացը բամբակ չե, վոր չի կարե-
լի ուտել ու չի կարելի ամեն մեկին վաճա-
ռել: Ի տարբերություն բամբակից՝ հացը
մեր ներկա պայմաններում այնպիսի ապ-
րանք է, վորը բոլորն ել վերցնում են և
առանց վորի չի կարելի գոյություն ունե-

նալ: Կուլակն այս հաշվի յի տեսում, և պա-
հում է այն, դրանով վարակելով առհասա-
րակ հացատերերին: Կուլակը դիտե, վոր հա-
ցը վալյուտաների վալյուտան է: Կուլակը
դիտե, վոր հացի ափեցուկները վճչ միայն
իրեն հարստացնելու միջոց են, այլև չքա-
վորությանն ստրկացնելու միջոց: Հացի ա-
փեցուկները կուլակի ձեռքին տվյալ պայ-
մաններում կուլակային տարրերի տնտեսա-
կան ու քաղաքական ուժեղացման միջոց են:
Ուստի այդ ափեցուկները կուլակներից
վերցնելով՝ մենք վճչ միայն հեշտացնում
ենք քաղաքներին ու Կարմիր բանակին
հաց մատակարարելը, այլև խաբելում ենք
կուլակության տնտեսական ու քաղաքա-
կան ուժեղացման միջոցը:

Ի՞նչ պետք է անել հացի այդ ափեցուկ-
ներն ստանալու համար: Հարկավոր է նախ
և առաջ լիկվիդացիայի յենթարկել ինքնա-
հոսի հոգեբանությունը վորպես ֆևասակար
ու վտանգավոր մի բան: Հարկավոր է հա-
ցամթերումները կազմակերպել: Հարկավոր է
չքավոր-միջակային մասսաներին մոբիլիզա-

ցիայի յենթարկել կուլակութեան դեմ ու
կազմակերպել նրանց հասարակական աջակ-
ցութեանը խորհրդային իշխանութեան մի-
ջոցառումներին՝ հացամթերումների ուժե-
ղացման գործում: Հացամթերումների ուրա-
սիւթիւրյան մեթոդի նշանակութեանը, — մի
մեթոդ, վոր կենսագործովում ե ինքնահարկ-
ման սկզբունքի համաձայն, — հենց այն ե,
վեր նա հնարավորութեան ե տալիս մորի-
ւիղացիայի յենթարկելու դուռի աշխատա-
վոր խավերին կուլակութեան դեմ հացամե-
թերումներն ուժեղացնելու գործի համար:
Փորձը ցույց տվեց, վոր այդ մեթոդը դրա-
կան արդյունքներ ե տալիս մեզ: Փորձը
ցույց տվեց, վոր այդ դրական արդյունք-
ները մեղանում ստացվում են յերկու ուղ-
ղութեամբ. նախ՝ մենք վերցնում ենք դուռի
կարողութեան տեր խավերի հացի ավելցուկ-
ները, դրանով հեշտացնելով յերկրի մատու-
կարարումը. յերկրորդ՝ այդ գործով մենք
չքավոր-միջակային մասսաներին մորելիղա-
ցիայի յենք յենթարկում կուլակութեան դեմ,
քաղաքականապէս լուսավորում ենք նրանց

ու նրանցից մեր հզոր բաղամիւրիոն քաղա-
քական բանակն ենք կազմակերպում դու-
ռում: Ընկերներից վոմանք հաշվի չեն առ-
նում այս վերջին հանգամանքը: Միւնչդեռ
հենց այդ ե, վոր հացամթերումների ուրա-
սիւթիւրյան մեթոդի կարևոր հետեանքներից
մեկն ե հանդիսանում, յիժե վոչ ամենակա-
րևորը: Ճիշտ ե, այդ մեթոդը յերբեմն դու-
գակցվում ե կուլակութեան դեմ արտակարգ
միջոցառումներ կիրառելու հետ, վորն ընկ-
ւնկ. Բուխարինի ու Ռիկովի կոմիկական
վայնասուններն ե առաջացնում: Իսկ սրա-
նում ի՞նչ վատ բան կա: Ինչո՞ւ չի կարելի
յերբեմն, վորոշ պայմաններում, արտակարգ
միջոցառումներ կիրառել մեր դասակարգա-
միջոցառումներ կիրառել մեր դասակարգա-
յին թշնամու դեմ, կուլակութեան դեմ: Ին-
չո՞ւ կարելի յե քաղաքներում հարյուրներով
սպեկուլանտներ ձերբակալել ե Տուրուխա-
նյան յերկիրն աքսորել նրանց, իսկ կուլակ-
ներից, վորոնք փորձում են խորհրդային
իշխանութեան կոկորդից բռնել ե իրենց
ստրուկը դարձնել չքավորներին, չի կարելի
հացի ավելցուկները վերցնել հասարակական

հարկադրանքի կարգով այն դներով, վորոնցով մեր մթերող կազմակերպություններին չքաղորներն ու միջակներն են հաց հանձնում: Վորտեղից և հետևում այդ: Մի՞թե մեր կուսակցությունը կուլակության նկատմամբ արտակարգ միջոցառումներ կիրառելուն սկզբունքով յերբևե գե՞մ ե արտահայտվել: Ընկերներ Ռիկովը ու Բուխարինն ակներևորեն սկզբունքով դեմ են կուլակության նկատմամբ ամեն մի արտակարգ ձեռնարկում կիրառելուն: Բայց չե՞ վոր դա բուլժուական-լիբերալ քաղաքականություն ե և վոչ թե մարքսիստական քաղաքականություն, թանգագին ընկերներ: Դուք չեք կարող չիմանալ, վոր Լենինը նույլ մտցնելուց հետո արտահայտվում եր մինչև իսկ չքաղորական կոմիտեների քաղաքականությանը վերադառնալու ոգտին, իհարկե, վորոչ պայմաններում: Իսկ կուլակների դեմ արտակարգ միջոցառումների մասնակի կիրառումն ի՞նչ բան ե վոր: Այդ մինչև անգամ մի կաթիլ չե ծախում՝ չքաղորական

կոմիտեների քաղաքականության հետ համեմատած:

Նրանք, ընկ. Բուխարինի խմբի կողմնակիցները, հույս ունեն դասակարգային թշնամուն համոզելու, վոր նա հոժարակամ հրաժարվի իր շահերից ու հոժարակամ մեղ հանձնի իր հացի ավելցուկները: Նրանք հուսով են, վոր կուլակը, վորն աճել և, վորը հնարավորություն ունի իր սվածի տեղը հանել այլ կուլտուրաներով ու վորը թագցնում ե իր հացի ավելցուկները, — նրանք հուսով են, թե հենց այդ կուլակը հոժարակամ կտա մեղ հացի իր ավելցուկները մեր մթերման գներով: Չե՞ն խելագարվել արդյոք նրանք: Պարզ չե՞ մի՞թե, վոր նրանք չեն հասկանում դասակարգային կռիվ մեխանիկան, չգիտեն, թե ի՞նչ բան ե դասակարգերը: Իսկ հայտնի՞ յե արդյոք նրանց, թե կուլակներն ինչպե՞ս են ծաղրում մեր աշխատողներին ու խորհրդային իշխանությանն այն գյուղական համայնական ժողովներում, վորոնք կազմակերպվում են հատկապես նրանց ուժեղացնելու համար: Ար-

դյոք նրանց հայտնի՞ յեն այնպիսի փաստեր, յերբ մեր ազիտատորը, որինակ, Կազակատանում յերկու ժամ համոզում եր հացատերերին հաց հանձնել յերկրի մատակարարման համար, իսկ կուլակը ծխամորձը բերանին հանդես ե յեկել ու պատասխանել նրան. «Ապա մի պար արի, յերիտասարդ, այն ժամանակ յես քեզ մի-յերկու փութ հաց կտամ»:

Ձայնեք: Սրեկաներ:

Ասալին: Ապա մեկ համոզեցեք այդպիսի մարդկանց: Այո, ընկերներ, դասակարգը—դասակարգ ե: Այս ճշմարտությունից չես խուսափի: Ուրախ երբեք յայն մեթոդն իսկապես հենց նրանով ե լավ, զոր այն հեշտացնում ե չքավոր-միջակային խավերին կուլակների դեմ հանելու հնարավորությունը, հեշտացնում ե կուլակների դիմադրությունը կտարելու հնարավորությունը ե նրանց հարկադրում ե հացի ավելցուկները հանձնելու Խորհրդային իշխանության որդաններին:

Այժմ ամենամոդայական բառը նոր ոպտդիցիայի շարքերում, ընկ, Բուխարինի խմբի

շարքերում, հանդիսանում ե «չափազանցումներ» (перегибы) բառը հացամթերումների բնադավառում: Այս բառը նրանց մոտ ամենազնայուն (самый ходкий) ապրանք ե, զորովհետեւ այդ խոսքն ոգնում ե նրանց դիմակալորելու իրենց սեփական դիժը: Յերբ նրանք ցանկանում են դիմակալորել իրենց դիժը, նրանք սովորաբար ասում են. մենք, իհարկե, դեմ չենք կուլակների վրա ճնշում գործ դնելուն, բայց մենք դեմ ենք չափազանցումներին, զորովհետեւ թույլ են տրվում այս բնագավառում ու զորովհետեւ դիպչում են միջակին: Այնուհետեւ զալիս են այդ չափազանցումների սարսափների վերաբերյալ պատմությունները, ընթերցվում են «գյուղացիների» նամակները, ընթերցվում են այնպիսի ընկերների խոճապային նամակները, ինչպիսիք են. Մարեկովն ե, ու հետո յեղրակացություն ե արվում. հարկավոր ե վերացնել կուլակության վրա ճնշում գործ դնելու քաղաքականությունը: Չեյի՞ք հաճի արդյոք. Բանի վաճառի թաղաքականության կենսագործ-

ման մեջ չափազանցումներ կան, ուստի, բանից դուրս ե գալիս, հարկավոր ե վերացնել հենց այդ նիւս քաղաքականութիւնը: Այս ե ոպորտունիստներէ սովորական յեղանակը. ճիշտ գծի կենսագործման մեջ յեղած չափազանցումներէ հիման վրա—վերացնել այդ գիծը՝ այն փոխարինելով ոպորտունիստական գծով: Ընդ սմին ընկ. Բուխարինի խմբին պատկանող ընկերները խնամքով լուսթյուն են պահպանում այն մասին, վոր չափազանցումներէ ուրիշ տեսակ ել դոյություն ունի, ապելի վտանգավոր ու ապելի վնասակար մի տեսակ, այն ե՝ չափազանցումներ կուլակության հետ սերտաճելու (срастание) կողմը, գլուղի ունեոր խափերին հարմարվելու կողմը, կուսակցության հեղափոխական քաղաքականությունն աջ ուկլոնիստներէ ոպորտունիստական քաղաքականությամբ փոխարինելու կողմը:

Իհարկե, մենք բոլորս դեմ ենք այդ չափազանցումներին: Մենք բոլորս դեմ ենք այն բանին, վոր կուլակության դեմ ուղղդփող հարվածները միջակներին դիպչեն:

Այս պարզ ե, ու սրտ մասին վոչ մի կամեկած չի կարող լինել: Բայց մենք վճռականորեն դեմ ենք այն բանին, վոր չափազանցումներէ վերարկյալ շաղակրատությամբ, վորը ջանասիրարար գործադրում ե ընկ. Բուխարինի խումբը, բեկանենք մեր կուսակցության հաղափոխական քաղաքականությունը ե այն նենգափոխենք ընկ. Բուխարինի խմբի ոպորտունիստական քաղաքականությամբ: Վոչ, ընկերներ, «ձեր այս նումերը չի անցնի»:

Կուսակցության ձեռք առած գեթ մի քաղաքական միջոցառման անուն տվեք, վորին չուղեկցեր այս կամ այն չափազանցումը: Սրանից հետեում ե, վոր հարկավոր ե պայքարել չափազանցումներէ դեմ: Բայց միթե այս հիման վրա կարելի յե պարտամիլ բուն իսկ գիծը, վոր միակ ճիշտ գիծն ե: Վերցնենք մի այնպիսի միջոցառում, ինչպես 7-ժամյա աշխատորվա կենսագործումն ե: Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր այս միջոցառումը վերջին ժամանակներս մեր կուսակցության կիրառած ամենահեղա-

վոխական միջոցառումներից մեկն է: Ո՞ւր
հայտնի է, վոր այդ, ըստ հյուսիսյան խորա-
պետ հեղափոխական, միջոցառումը մեղանում
հենց մի գլուխ ուղեկցվում է մի ամբողջ
շարք չափազանցումներով, յերբեմն ամենա-
գարշելի չափազանցումներով: Նշանակում է
այս արդյոք, վոր մենք պետք է վերացնենք
7-ժամյա աշխատողա կենսադործման քա-
ղաքականությունը: Նոր ոպողիցիային պատ-
կանող ընկերները հասկանում են արդյոք,
թե ինչ հիմար դրության մեջ են ընկնում
իրենք, իբրև կողբո ծառայեցնելով հացա-
մթերման գործում յեղած չափազանցում-
ները:

IV. ԱՋ ԹԵՔՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այսպիսով մենք քննություն առանք
ինչպես թեորիայի բնագավառում, այնպես
ևլ մեր կուսակցության կոմիտեներնյան ու
ներքին քաղաքականության բնագավառում
յեղած մեր տարաձայնությունների բոլոր

գլխավոր հարցերը: Ասածից յերևում է,
վոր ընկ. Ռիկովի հայտարարությունը մե-
ղանում միասնական գծի առկայության մա-
սին իրականության էի համապատասխա-
նում: Ասածից յերևում է, վոր մեղանում
իրապես կա յեղու գիծ: Մի գիծը, դա—
կուսակցության գլխավոր գիծն է, մեր կու-
սակցության լենինյան հեղափոխական գիծը:
Մյուս գիծը, դա—ընկ. Բուխարինի խմբի
գիծն է: Այս յերկրորդ գիծը դեռևս վոչ լի-
վին է ձևավորված մասամբ. այն պատճա-
ռով, վոր ընկ. Բուխարինի խմբի շարքե-
րում հայացքների աներևակայեղ շփոթ կա,
մասամբ ել այն պատճառով, վոր նա, այդ
յերկրորդ գիծը, կուսակցության մեջ ունե-
ցած իր տեսակարար կշռի կողմից թույլ լի-
նելով, աշխատում է այս կամ այն կերպ
դիմակավորվել: Բայց նա, այդ գիծը, ինչպես
տեսնում էք, այնուամենայնիվ գոյություն
ունի, և նա գոյություն ունի վերպես մի գիծ,
վորը ջարբեք է կուսակցության գծից, վոր-
պես մի գիծ, վորն իրեն հակադրում է կու-
սակցության գլխավոր գծին մեր քաղաքա-

փոխական միջոցառումներից մեկն է։ Ո՞ւր
հայտնի չէ, Վոր այդ, ըստ ելուծյան խորա-
պես հեղափոխական, միջոցառումը մեղանում
հենց մի գլուխ ուղեկցվում է մի ամբողջ
շարք չափազանցումներով, յերբեմն ամենա-
զարչելի չափազանցումներով։ Նշանակում է
այս արդյոք, Վոր մինք պետք է վերացնենք
7-ժամյա աշխատողա կենսագործման քա-
ղաքականությունը։ Նոր ոպողիցիային պատ-
կանող ընկերները հասկանում են արդյոք,
թե ինչ հիմար դրություն մեջ են ընկնում
իրենք, իբրև կողքը ծառայեցնելով հացա-
մթերման գործում յեղած չափազանցում-
ները։

IV. Ա.Ջ. ԹԵՔՄԱՆ ԴԵՄ

ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այսպիսով մենք քննության առանք
ինչպես թեորիայի բնագավառում, այնպես
ևլ մեր կուսակցության կոմիտեներնյան ու
ներքին քաղաքականության բնագավառում
յեղած մեր տարաձայնությունների բոլոր

գլխավոր հարցերը։ Ասածից յերևում է,
վոր ընկ. Ռիկովի հայտարարությունը մե-
ղանում միասնական գծի առկայության մա-
սին իրականություն չի համապատասխա-
նում։ Ասածից յերևում է, Վոր մեղանում
իրապես կա յեղու գիծ։ Մի գիծը, դա—
կուսակցության գլխավոր գիծն է, մեր կու-
սակցության լենինյան հեղափոխական գիծը։
Մյուս գիծը, դա—ընկ. Բուխարինի խմբի
գիծն է։ Այս յերկրորդ գիծը դեռևս վոչ լիտ-
վին է ձևավորված մասամբ. այն պատճա-
ռով, Վոր ընկ. Բուխարինի խմբի շարքե-
րում հայացքների աներևակայելի շփոթ կա,
մասամբ ել այն պատճառով, Վոր նա, այդ
յերկրորդ գիծը, կուսակցության մեջ ունե-
ցած իր տեսակարար կշռի կողմից թույլ լի-
նելով, աշխատում է այս կամ այն կերպ
գիմակավորվել։ Բայց նա, այդ գիծը, ինչպես
տեսնում եք, այնուամենայնիվ գոյություն
ունի, և նա գոյություն ունի վերպես մի գիծ,
վորը արքեք է կուսակցության գծից, վոր-
պես մի գիծ, վորն իրեն հակադրում է կու-
սակցության գլխավոր գծին մեր քաղաքա-

կանության համարյա բոլոր հարցերում:
Այդ յերկրորդ գիծը հիմնականում աջ թեք-
ման գիծն է:

Ընկ. Բուխարինն այստեղ խոսում եր
Քաղբյուրոյի յերեք անդամների «քաղաքա-
ցիական մահապատժի» մասին, վորոնց, նրա
ասելով, մեր կուսակցության կազմակերպու-
թյունները «մշակման են յենթարկում»: Նա
ասում եր, վոր կուսակցությունը Քաղբյու-
րոյի յերեք անդամներին՝ ընկ. ընկ. Բուխա-
րինին, Ռիկովին ու Տոմսկուն, քննադատե-
լով մամուլում ու ժողովներում նրանց սխալ-
ները, «քաղաքացիական մահապատժի» յեն-
թարկեց, մինչդեռ նրանք, Քաղբյուրոյի այդ
յերեք անդամները, «ստիպված» ենին լռել:
Սրանք դատարկ բաներ են, ընկերներ:
Սրանք լիբերալություն անող կոմունիստի
կեղծ խոսքեր են, վորը կուսակցության
պոտտակները թուլացնելու (развинтить)
փորձ ե անում աջ թեքման դեմ մղվող նրա
պայքարում:

Բուխարինի մոտ դուրս ե գալիս, վոր
յեթն ինքն ու իր բարեկամները խրվել են

աջ ուղիւնիստական սխալների մեջ, ապա
կուսակցությունն իրավունք չունի մերկաց-
նելու այդ սխալները, կուսակցությունը
պետք ե դադարեցնի պայքարն աջ թեք-
ման դեմ ու սպասի այն մոմենտին, յերբ
ընկ. Բուխարինին ու նրա բարեկամներին
հաճելի կլինի հրաժարվել իրենց սխալնե-
րից: Արդյոք ընկ. Բուխարինը չափազանց
շատ բան չի պահանջում մեզանից, Զինի
թե նա կարծում ե, թե կուսակցությունը
դոյություն ունի իրեն համար, և վոչ թե
ինքը կուսակցության համար: Իսկ նրան
ո՞վ ե հարկադրում լռել, հանգստի վիճակում
մնալ, յերբ ամբողջ կուսակցությունը մոբի-
լիզացիայի յենթարկված աջ թեքման
դեմ ու վճռական գրոհներ ե տալիս դժվա-
րություններին դեմ: Ինչո՞ւ նա՞ ընկ. Բուխա-
րինը, և նրա մերձավորագույն բարեկամ-
ները հանդես չգան այժմ ու վճռական պայ-
քար չմղեն աջ թեքման ու հաշտվողակա-
նության դեմ: Մի՞թե վորեւե մեկը կարող ե
կասկածել, վոր կուսակցությունը կողջուներ
ընկ. Բուխարինին ու նրա մերձավորագույն

բարեկամներին, յեթե նրանք վճռեցին անհաշիւ այդ քայլը, վորն այնքան եւ դժգոյր քայլ է: Իսկ նրանք ինչո՞ւ վճռականություն չեն ցուցաբերի անհաշիւ այս՝ վերջի վերջո նրանց համար պարտադիր՝ քայլը: Արդո՞ք վճի այն պատճառով, վոր իրենց խմբի շահերը նրանք կուսակցութեան ու նրա գլխավոր գծի շահերից վեր են դասում: Իսկ ո՞վ եւ մեղավոր այն բանում, վոր աջ թեքման դեմ մղվող պայքարում ընկ. ընկ. Բուխարինը, Ռիկովը եւ Տոմսկին բացակա դառնան (оказались в петях): Պարզ չե՞միթե, վոր Քաղբյուրոյի յերեք անդամների «քաղաքացիական մահապատժի» վերաբերյալ ասեկոսները Քաղբյուրոյի յերեք անդամների վատ գիմակալութիւնով փորձն են հարկադրելու կուսակցութեանը, վոր լսի ու դադարեցնի պայքարն աջ թեքման դեմ:

Աջ թեքման դեմ պայքարելը մեր կուսակցութեան յերկրորդական խնդիրը չէ: Աջ թեքման դեմ պայքարելը մեր կուսակցութեան վճռողական խնդիրներից մեկն է: Յեթե մենք մեր սեփական շրջանում,

մեր սեփական կուսակցութեան մեջ, պրոլետարիատի քաղաքական շտաբում, վորը դեկավարում եւ շարժումը եւ վորն առաջ ետանում պրոլետարիատին, — յեթե մենք բուն իսկ այդ շտաբում թուլատրենք, վոր ազատորեն գոյութիւն ունենան ու ազատորեն գործեն աջ ուղիւն խոստերը, վորոնք փորձում են դեմոքրիկացիայի յինթարկել կուսակցութեանը, քայքայել բանվոր դասակարգը, հարմարեցնել մեր քաղաքականութեանը «խորհրդային» բուրժուազիայի ճաշակին եւ այդպիսով մեր շինարարութեան դժգոյրութեաններէ հանդիպ փաստ լինել — յեթե մենք այս ամենը թուլատրենք, ապա այդ ինչ կնշանակի: Արդո՞ք այդ չի՞ նշանակի, վոր մենք կամենում ենք արգելակներով դիպի վայրեջք տանել հեղափոխութեանը, քայքայել մեր սոցիալիստական շինարարութեանը, դժգոյրութեաններէ փախչել, դիւթյունը հանձնել կապիտալիստական տարրերը: Ընկ. Բուխարինի խումբը հասկանալով, վոր հրաժարվել աջ թեքման դեմ պայքարելուց՝ նշանակում եւ դավաճանել

բանվոր դասակարգին, դավաճանել հեղափոխութեանը: Ընկ. Բուխարինի խումբը հասկանում է արդյոք, վոր առանց աջ թեքումն ու հաշտվողականութունը հաղթահարելու անհնար է հաղթահարել մեր առջև կանգնած դժվարությունները, իսկ առանց այդ դժվարությունները հաղթահարելու անհնար է սոցիալիստական շինարարութեան վճռողական հաջողություններ ձեռք բերել: Այս ամենից հետո ի՞նչ արժեք ունեն Բաղբյուրոյի յերեք անդամների «քաղաքացիական մահապատժի» վերաբերյալ խղճալի խոսքերը:

Վհչ, ընկերներ, «քաղաքացիական մահապատժի» վերաբերյալ լիբերալ շողակրատութեամբ դուք կուսակցութեանը չեք վախեցնի: Կուսակցութեանը պահանջում է ձեզանից, վոր մեր կուսակցութեան ԿԿ-ի բոլոր անդամների հետ միենուշն տողանում (шеренга) վճռական պայքար մղեք աջ թեքման ու հաշտվողականութեան դեմ: Կուսակցութեանն այս բանը ձեզանից պահանջում է նրա համար, վոր հեշտացնի բանվոր դա-

սակարգի մոբիլիզացիայի գործը, կազմակերպի սոցիալիզմի հարձակումն ամբողջ ճակատով, խորտակի դասակարգային թշնամիները: Դեմագոգութեանը և ապահովի մեր շինարարութեան դժվարությունների հաղթահարումը: Կամ դուք կուսակցութեան այս պահանջը կկատարեք, և այն ժամանակ կուսակցութեանը ձեզ կողջունի: Կամ դուք այդ չեք անի,—բայց այն ժամանակ դժգոհեցե՞ք ձեզանից:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՂ

✓ I. Դասակարգային տեղաշարժերն ու մեր տա- րածայնությունները	3
✓ II. Տարածայնություններ Կոմիտեներնի գծով	23
✓ III. Տարածայնություններ ներքին քաղաքա- կանության գծով	39
✓ ա) Դասակարգային կռվի մասին	41
✓ բ) Դասակարգային կռվի սրման մասին	54
✓ գ) Գյուղացիության մասին ✓	64
✓ դ) Նեպի և շուկայական հարաբերություն- ների մասին.	72
✓ ե) Ինդուստրիայի զարգացման տեմպի և զոգման նոր ձևերի մասին	84
✓ զ) Ընկ. Բուխարինը վորպես թեորեթիկ	110
✓ է) Հնգամյակ թի յերկամյակ	132
✓ ը) Ցանքի տաքածությունների հարցը	140
✓ թ) Հացամթերույնների մասին	146
✓ Վ. Աջ թեքման դեմ պայքարելու մասին	160

✓ I. Դասակարգային տեղաշարժերն ու մեր տա- րածաշնությունները	3
✓ II. Տարածաշնություններ Կոմիտեերնի գծով	23
✓ III. Տարածաշնություններ ներքին քաղաքա- կանության գծով	39
✓ ա) Դասակարգային կռվի մասին	41
✓ բ) Դասակարգային կռվի սրման մասին	54
✓ գ) Գյուղացիության մասին ✓	64
✓ դ) Նեպոլի և շուկայական հարաբերություն- ներն մասին.	72
✓ ե) Ինդուստրիայի զարգացման տեմպի և զուգման նոր ձևերի մասին	84
✓ զ) Ընկ. Բուխարինը վորպես թեորետիկ	110
✓ է) Հնգամյակի թե յերկամյակ	132
✓ ը) Ցանքի տարածություններին հարցը	140
✓ թ) Հացամթերութեան մասին	146
✓ Վ. Աջ թեքման դեմ պայքարելու մասին	160





80/

ՀՀ Ազգային գրադարան



NL0185657

368

9622 75 ч.

40202 70 ч

1р. 45к.

И. СТАЛИН
О ПРАВОМ УКЛОНЕ В ВКП(б)